Ազգ

AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 15
1992
Հինգշաբթի

օրաթերթ
Բ տարի, թիւ 109 (201)
գինը 2 ռ

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPRI SU

Ֆրանսիական, ալժիրյան եւ գերմանական օգնություն աղեցյալ Կահիրեին

Երկրաշարժից աղեցյալ Կահիրեին առաջինը օգնության հասան Ֆրանսիան, Ալժիրը եւ Գերմանիան: Բեռնատար օդանավերով դեղորայք, ծածկոցներ եւ առաջին անհրաժեշտության այլ իրեր հասան Կահիրեի օդակայանը, մինչ այլ երկրներ խոստացան նաեւ նյութապես օգնության հասնել եգիպտացի աղեցյալներին:

Երեկ ցավակցական այցով Կահիրե ժամանեց Հորդանանի Հուսեյն թագավորը, մինչ նախագահ Հոսնի Մուբարաքը հայտարարեց, թե բոլոր տնազուրկները ձրի բնակարան կստանան կառավարության կողմից կառուցվելիք շենքերում: Նա հայտարարեց, թե երկրաշարժի պատճառած վնասները հասնում են 1,5 միլիարդ դոլլարի:

Ինչպես իմացանք մեր պատշաճակից «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի երեկվա համարից, Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը նախորդ օրը ցավակցական հեռագիր է հղել Եգիպտոսի նախագահին:

Երեկ շարունակվեցին փնտրտուքները փլված շենքերում: Փրկարարները հիշ հույս ունեն նոր վերառողներ գտնելու: ■

Ռ. Հովհաննիսյան. «Հայաստանը տանում է վճռական ու համարձակ արտաքին քաղաքականություն»

Արտգործնախարարը մերժեց իր հրաժարականի մասին ոստվող լուրերը

Նախօրեին մամուլում հրապարակված սպասելիք հատուկ հայտարարության փոխարեն երեկ Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն անցկացրեց իր հերթական մամուլի ասուլիսը: Խոսելով անցած 11 ամիսների ընթացքում Հայաստանի արտգործնախարարության կատարած աշխատանքների մասին, նախարարը նշեց, որ մեր հանրապետությունը հաստատել է իր արդար տեղը գրավել աշխարհի դիվանագիտական քարտեզի վրա: Դրա վառ օրինակն են ՄԱԿ-ում վերջերս կայացած հանդիպումները, որոնց ընթացքում բարձրացվել է ՄԱԿ-ի ավելի գործուն միջամտության հարցը ղարաբաղյան խնդրին: Արդեն հայտնի է դարձել, որ այդ հարցը կքննարկի նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: Նախարարը հայտարարեց, թե Հայաստանը իրագործել է վճռական արտաքին քաղաքականություն, որովհետեւ մենք վստահ ենք, որ միայն վճռականությամբ է Հայաստանն արժանանալու միջազգային հարգանքի:

Ըստ նախարարի, Հայաստանը վարել է ոչ միայն հավասարակշռված, այլ նաեւ քաջ ու արի քաղաքականություն: Մենք վճռել ենք չկրկնել անցյալի դառը սխալները, մեր հույսը կապելով այս կամ այն շրջանի հետ, այլ միավորվելով աշխարհին ներկայացնել մեր ժողովրդի համարձակ դիրքորոշումները, ասաց նա:

Անդրադառնալով իր հնարավոր հրաժարականին, նախարարը նշեց, թե հայ ժողովրդին ծառայելն իր համար մեծ պատիվ է եւ այնքան ժամանակ կաշխատի, մինչեւ որ ժողովուրդն այլ բան ասի: Նախարարը հիմնական թերությունները վերագրեց նախարարության ստացած ժառանգությանը, ասելով, թե դրանք ժամանակի ընթացքում հարթվեն: Իսկ նախագահ-արտգործնախարար տարաձայնությունները համարելով երկու տարբեր մարդկանց միջեւ գոյություն ունեցող բնական երեւույթ, որն. Հովհաննիսյանը հայտարարեց, թե ինքը եւ նախարությունը հավասարմորեն իրականացնում են Հայաստանի նախագահի հռչակած պետական ազգային քաղաքականությունը:

Արտգործնախարարը հայտնեց նաեւ, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները առաջ են ընթանում, բայց դրանց բուն ընթացքը կախված է նաեւ Հայաստանի մոտեցումներից: Ռուսաստան-Ադրբեջան նոր պայմանագիրը նա համարեց հետաքրքրական, բայց նշեց, որ հաշվի առնելով հայ-ռուսական համաձայնագրերը, Ռուսաստանը երբեք հակասական քայլեր չպետք է թույլ տա: Իսկ Լեռնային Ղարաբաղի հարցում Ռուսաստանի միջնորդությունը աղարդյուն կլինի, եթե այդ ընթացքին չներգրավվեն ԼՂՀ ներկայացուցիչները: Նախարարը մեկ անգամ եւս հավաստեց ամիսներ առաջ իր կողմից արված այն հայտարարությունը, թե հաստատել է Հայաստանի եւ համաշխարհային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը:

Ա. Հ.

Շուռնուխի ուղղությամբ հարձակումը կասեցվել է

Պառավաքար-Իջեւան հատվածում զոհվել են երկու հայորդիներ

Երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Հայաստանի սահմանամերձ շրջաններում շարունակում էր մնալ լարված: Ինչպես արդեն տեղեկացրել էինք, հոկտեմբերի 13-ին Ադրբեջանի տարածքից տանկերից, հեռահար՝ հրետանուց եւ «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Գորիսի շրջանի Տեղ եւ Կոռնիձոր գյուղերը: Նախորդ գիշեր նույն զինատեսակներից հրետակոծվել է նաեւ Խնածախ գյուղը: Կան զգալի ավերածություններ:

Ինչպես տեղեկացնում է «Նոյյան տաղան» լրատվական գործակալությունը, հոկտեմբերի լույս 14-ի գիշերը ադրբեջանական կազմավորումները հարձակում են ձեռնարկել Գորիսի շրջանի Շուռնուխ գյուղի ուղղությամբ: Հարձակումը կասեցվել է: Մարտերի ընթացքում հայկական սահմանապահ ուժերի մարտիկներից մեկը զոհվել է: Երեկ կեսօրվա տվյալներով, իրադրությունը շրջանում հանգիստ էր:

Ինչպես տեղեկացնում են Տաուշի շրջխորհրդի գործկոմից, երեկ օրվա ընթացքում Ադրբեջանի Թռուզի եւ Ղազախի շրջանների տարածքից տանկերից եւ հեռահար հրետանուց հրետակոծվել են շրջանի սահմանամերձ Մովսես, Պառավաքար եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերը, ինչպես նաեւ հայկական պաշտպանական դիրքերը: Ադրբեջանական դիվերսիայի հետեւանքով Պառավաքար-Իջեւան ճանապարհահատվածում զոհվել են երկու հայորդիներ: Երեկ երեկոյան հայկական պաշտպանական դիրքերի եւ խաղաղ բնակավայրերի գնդակոծությունները շարունակվում էին: Հարկ եղած դեպքում հայկական ուժերը դիմում են պատասխան գործողությունների:

Հոկտեմբերի 13-ի երեկոյան Եղեգնաձորի շրջանի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության տեղական իշխանությունների ներկայացուցիչների միջեւ տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում կրակի դադարեցման մասին համաձայնություն է ձեռք բերվել: Այնուամենայնիվ, նույն օրը, հանդիպումից 3 ժամ անց ավտոմատներից եւ գնդացիրներից գնդակոծվել է Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղը: Երեկ առավոտյան գնդակոծությունը դադարել է:

Մինչդեռ, ինչպես տեղեկացնում է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, հայկական ուժերը երեկ եւ նախորդ գիշեր գնդակոծել եւ հրետակոծել են Ադրբեջանի գրեթե բոլոր սահմանամերձ շրջանները՝ այլ զենքերի հետ միասին օգտագործելով նաեւ ռազմական օդուժ: Հրետակոծությունների հետեւանքով զոհվել են երեք ադրբեջանցիներ: Կան նաեւ վիրավորներ եւ ավերածություններ: ■

Երկաթուղու աղաշրջափակումը Ադրբեջանի չկամության հետեւանք

Մեղտեմբերի 25-ին Մոսկվայում Հայաստանի, Ռուսաստանի Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչների միջեւ կնքվեց համաձայնագիր, որով որոշվեց վերականգնել Աղստաֆա-Իջեւան, Մինջեւան-Մեղրի-Նախիջեւան-Երեւան, Զանգելան-Ղազախ երկաթուղին: Դրանից հետո անդրկովկասյան երկու հանրապետությունների երկաթուղիների ղեկավարները պայմանավորվածություն ձեռք բերեցին բացել Բաքու-Նախիջեւան-Երեւան, Բաքու-Թբիլիսի-Երեւան եւ մի շարք այլ ճանապարհներ: Նախատեսվում էր, որ հայկական կողմը մինչեւ հոկտեմբերի 13-ը կավարտի Մեղրիի հատվածի եւ Իջեւան-Աղստաֆա գծի հայկական հատվածի նորոգման-վերականգնման աշխատանքները, սակայն այդ աշխատանքները ժամանակին չավարտվեցին Ադրբեջանի կողմից հայկական սահմանամերձ շրջաններն անընդհատ հրետակոծելու պատճառով: Ակներեւ է, Ադրբեջանը չի շտապում վերականգնել երկաթուղային կապը եւ նորմալացնել երկու հանրապետությունների հարաբերությունները:

Այդ առիթով հոկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությունը բողոքի նոտա է ուղարկել Ադրբեջանի արտգործնախարարությանը: Նոտայի մասին տեղյակ է պահվել Ռուսաստանի արտգործնախարարությանը՝ որպես Մոսկվա եւ Սոչի քաղաքներում եռակողմ բանակցությունների մասնակցի: ■

Ելցինը Հարավ. Կորեային հանձնեց 1983 թ. խփված «Բոինգ»ի մասին փաստաթղթերը

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը տրանսպորտի նախարարի տեղակալ Չան Սան Հենի գլխավորած հարավկորեական պատվիրակությանը հանձնեց 12 փաստաթուղթ, որոնք վերաբերում են 1983 թ. «Բոինգ-747» ինքնաթիռի հետ պատահած դժբախտությանը: Այն խփվել էր խորհրդային զրահային ինքնաթիռի կողմից Սախալինի վրա, որի հետեւանքով մահացան 269 մարդ: Ինքնաթիռը ընկել էր ծովը:

Ինչպես հայտնեց Ելցինը, այդ փաստաթղթերը իրենց մեջ պարունակում են «սեւ արկղի» ամբողջ տեղեկատվությունը, ինքնաթիռի գրանցող սարքի զեկույցի մագնիտոֆոնային ձայնագրության տեքստը, Յուրի Անդրոպովին տրված զեկույցները, ինչպես նաեւ ռազմական փորձագետների եզրակացությունը: Նա հայտնեց, որ հեռախոսային զրույց է ունեցել Հարավային Կորեայի նախագահ Ռո Դե Ուի հետ, որի ժամանակ վերջինս իր երախտագիտությունն է հայտնել Ռուսաստանի ղեկավարությանը: ■

Հոկտեմբերի վերջին Դամասկոսում կբացվի Հայաստանի դեսպանատունը

Այդ նպատակով այս շաբաթ Դամասկոս կմեկնի Հայաստանի արտգործնախարարության պատվիրակությունը դեսպանատուն բացելու վերջին կարգադրություններն անելու: Այս մասին երեկ լրագրողներին հայտնեց արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը: Նա հայտարարեց, թե մինչեւ ամսվա վերջ Դամասկոսում կունենանք Հայաստանի դեսպանատուն, իսկ մինչեւ տարեվերջ Հալեպում կբացվի հյուպատոսություն: Նույնատիպ աշխատանքներ են տարվում նաեւ Եգիպտոսում: ■

Ադրբեջանը խոչընդոտում է Կասպիական նավատորմի բաժանմանը

Ադրբեջանը խախտում է Ռուսաստանի հետ Կասպիական նավատորմի բաժանման պայմանավորվածությունները, խոչընդոտելով ռազմական տեխնիկայի եւ ունեցվածքի Ռուսաստան տեղափոխմանը: ՌԴՆ-ի լրատվական կենտրոնը բերում է օրինակներ, երբ Ադրբեջանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչները տարբեր պատճառաբանություններով խախտել են ռազմական էշելոնների բարձման ժամկետները: Իսկ հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ զինված հարձակում, որի հետեւանքով Կասպիական նավատորմի ավտոմոբիլային ծառայության 11 վագոններ գրավվեցին նրանց կողմից:

Ռուսաստանի ՌԴՆ-ի լրատվական ծառայության ղեկավարը, հակաօրինական գործողություններ են գրանցվել նաեւ զինծառայողների անձնական ունեցվածքի փոխադրման ժամանակ: Չնայած, որ բեռնարկղերն արդեն սուզվել էին Ադրբեջանի ռազմածովային ուժերի ներկայացուցիչների կողմից, ներկա դրությամբ անց է կացվում դրանց կրկնակի ստուգումը մաքսային ծառայությունում: Դա կատարվում է այն ժամանակ, երբ սպաների մեծ մասը իրենց ընտանիքներով արդեն մեկնել են Ռուսաստանի տարբեր քաղաքներ, ծառայությունը շարունակելու համար: ■

Լորդ Օուենը սպառնում է սերբերին

Հարավսլավական կոնֆլիկտի լուծման գծով Եվրոպական համագործակցության երկրների ներկայացուցիչ լորդ Օուենը երեկ սպառնաց սերբերին, որ թռիչքազերծ գոտի հայտարարված Բոսնիայի երկնքում սերբական օդանավեր պատահելու դեպքում արեւմտյան օդուժը կհարվածի դրանց: Շաբաթ օրը սերբական մի օդանավ խախտել էր թռիչքազերծ գոտին: Մյուս կողմից, երեկ Լեհաստան հասավ Բոսնիայի Բոսանսկի Բրոդ քաղաքից փախած երեխաների եւ կանանց տեղափոխող 2 գնացքներից առաջինը: Տեղում գտնվող լրագրողների վկայությամբ երեխաները խիստ հոգնած էին եւ ուժասպառ: Նրանցից ոմանք չգիտեին իրենց ծնողների գտնվելու վայրը: Վաղը կհասնի 2-րդ գնացքը: ■

Ռոս Պերոն ձայներ է շահում

Նախագահական անկախ թեկնածու Ռոս Պերոն ընտրապայքարում արագորեն ձայներ է հավաքում իր օգտին եւ կարող է մինչեւ շաբաթավերջ 20 տոկոսի հասցնել դրանք, եթե նրան հաջողվի թեկնածուների հրապարակային 2-րդ բանավեճի ընթացքում (որը տեղի պիտի ունենար երեկ ուշ գիշեր) դարձյալ լավ դրսեւորել իրեն: Մյուս կողմից, դեմոկրատ թեկնածու Բիլ Քլինթոնը քաջալերական օժանդակություն ստացավ ամերիկյան բանակի պաշտոնաթող բարձրաստիճան սպաներից, որոնք նրան պաշտպանեցին նախագահ Բուշի այն ամբաստանությունից, թե իբր ինքը սել է ինքնակենսագրական տվյալները ներկայացնելիս: Իր հերթին Բուշը խոստացավ վերընտրվելու դեպքում փոխել տնտեսական-ֆինանսական հարցերի գծով իր խորհրդականների կազմը: ■

Քանեմատուն դուրս է գալիս քաղաքականությունից

Տեղի տալով հասարակական կարծիքին եւ սեփական կուսակցության դժգոհություններին, նահանգապետ իշխող ռամկավար ազատական կուսակցության ղեկավար եւ երկրում ամենաազդեցիկ քաղաքագետներից մեկը՝ Շիմ Քանեմատուն հրաժարական տվեց խորհրդարանի անդամությունից: Նա խոստովանել էր, որ իր կուսակցության համար ավելի քան 4 միլիոն դոլլարի նպաստ էր ստացել տրանսպորտի հարցերով զբաղվող մի ֆիրմայից, որի գործունեությունը կապված է մաֆիոզ շրջանակների հետ: Հասարակական կարծիքը խիստ դժգոհ էր մնացել դատարանից, Քանեմատուին տրված պատժի մեղմության պատճառով: ■

Մադոննան իրականացնում է ամերիկյան «էքսպանսիան» Ֆրանսիայում

Այսպես է գնահատում RFI կայանը Մադոննայի հյուրախաղերը Ֆրանսիայում: Նա նշում է, որ Մադոննան նման է միջնադարյան այն մեքենաներին, որոնց միջոցով գրավում էին անառիկ ամրոցներ: Տվյալ դեպքում իբրեւ ամրոց RFI-ն դիտարկում է Փարիզը եւ ողջ Ֆրանսիան: ■

digitised by A.R.A.R.@

ՀՈՒԱԿ Հանրաքեսական վարչությունում

ՀՈՒԱԿ Հանրաքեսական վարչությունը հոկտեմբերի 13-ին կայացած նիստում լսեց Հայաստանի տնտեսական զարգացման խորհրդի (ՀՏԶԽ) Երեւանի գրասենյակի կատարած աշխատանքների մասին տնօրեն Ռոմեն Կոզմոյանի հաղորդումը: Վերջինս նշեց, թե գրասենյակն իր գոյության մեկ տարվա ընթացքում զգալի աշխատանքներ է կատարել եւ բավականին լավ համբավ է ձեռք բերել արտասահմանյան ձեռնարկությունների շրջանում: Սակայն արդյունքները շատ ավելին կլինեին, եթե չխանգարեր Հայաստանի ներկա քաղաքական վիճակը, ճանապարհների շրջափակումը եւ համապատասխան օրենքների պակասն ու եղածների անկատար լինելը:

Նիստում ՀՈՒԱԿ Հանրաքեսական վարչության եւ ՀՏԶԽ Երեւանի գրասենյակի միջեւ ավելի սերտ համագործակցության ցանկություն արտահայտվեց:

ՀՈՒԱԿ Հանրաքեսական վարչության անդամ, ՀՀ ԳԽ պատգամավոր, ՀՈՒԱԿ խմբակցության անդամ Սամվել Սահակյանը տեղեկություններ հաղորդեց տեղի ՈԱԿ վարչության հրավերով Ավստրալիա կատարած իր այցի մասին:

Ներկաներին տեղեկություն տվեց ՀՈՒԱԿ-ի գրասենյակի վերանորոգման եւ կահավորման աշխատանքների մասին: Հաստատվեց ՀՈՒԱԿ-ՈԱԿ առաջիկա նիստի օրակարգը:

Քննարկվեցին նաեւ կազմակերպչական հարցեր: ■

Քննարկվեցին քաղաքական կառուցվածքները

Երեւանի խորհրդի հերթական առավոտյան նիստը հետաձգվեց քվորում չլինելու պատճառով: Ընդմիջումից հետո սկսված նիստը ծավալեց գործկոմի կառուցվածքների քննարկումը, որը վերջապես ավարտին հասցվեց: Բազում փոփոխությունների շարքում որոշում ընդունվեց դիմել համապատասխան այցելուներին՝ շրջանային ժողովրդաժիները լուծարելու, տեղական ոստիկանություն ստեղծելու, քաղաքային տրանսպորտի կառավարումը Երեւանի գործկոմի տրանսպորտի ու կապի վարչությանը հանձնելու, շրջանային սանիտարահամաճարակային կայանները քաղաքային սանիտարա-համաճարակային վարչությանը հանձնելու մասին: Որոշվեց նաեւ եռամսյա ժամկետում միավորել քաղաքի սննդառները, պտուղբանջարաները եւ հասարակական սննդի միավորումները:

Օրվա երկրորդ կեսին սկսվեց ծնող նախապատրաստման աշխատանքների վերաբերյալ քննարկումը: Հարցի կապակցությամբ քաղխորհուրդը լսեց գործկոմի նախագահի առաջին տեղակալ Կարապետ Ռուբինյանի ելույթը: Այնուհետեւ տրվեցին հարցեր, եւ ընթացավ հարցի քննարկումը:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Հանդիպում Կանադայի ներկայացուցչի հետ

Երեկ հետմիջօրեին «Ազգ»-ի խմբագրություն այցելեց Մոսկվայում Կանադայի դեսպանության խորհրդական-նախարար Ֆերրի դը Վերֆոյ Վան Դեր Վարենը եւ քաղաքական-տնտեսական հարցերի գծով մեկուկեսժամյա զրույց ունեցավ ՀՈՒԱԿ Հանրաքեսական վարչության անդամներ Ռուբեն Հրազխանյանի եւ թերթի խմբագիր Հակոբ Ավետիքյանի հետ: Զրույցի ընթացքում շոշափվեցին հայկական մեր նորանկախ հանրապետության ռամկավարացման տնտեսական ազատ հարաբերությունների անցման ներկա վիճակը դժվարությունները, Կանադայի հնարավոր օգնության ձեւերն այդ ուղղությամբ: ■

Վազգեն Սարգսյան. «Ես դուրս կգամ, երբ հասնենք իրական հաջողություններին»

Բիշքեկից Երեւան թռչող նախագահական ինքնաթիռում Հայաստանի պաշտոնական պատվիրակության անդամ, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հետ զրույցը տեղի ունեցավ հանդարտասիրտ, անկաշկանդ մթնոլորտում: Մենք ձգտեցինք չշոշափել ռազմաքաղաքական գործողություններին վերաբերող մանրամասներ, նկատի ունենալով մեր երկրի եւ ընդհանուր գործի անվտանգության առումով, փորձեցինք մտերմիկ զրույցի միջոցով պարզել պաշտպանության նախարարի այն դիրքորոշումները, որոնց երբեմն չենք անդրադարձել:

– Բիշքեկում հանդիպեցիք Ռուսաստանի պաշտպանության նախարար Գրաչովի հետ, ունեցաք տարբեր մակարդակի առանձնազրույցներ: Արտաքնապես թվաց, թե պրն. Գրաչովը լավ հարաբերությունների մեջ է Ձեզ հետ: Եթե այդպես է, ապա դա որքանո՞վ է անդրադառնում Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ տարվող քաղաքականության վրա:

– Այդ կապերը կարող են ինչ-որ տեղ ազդեցություն ունենալ, բայց ընդհանուր քաղաքականության մեջ՝ ոչ:

– Իսկ մեր ուժերը բավականացնո՞ւմ են մեր քաղաքականության իրականացման համար:

– Ընդհակառակը, քաղաքականությունը չի հասնում ուժին, ոգուն:

– Ի՞նչ վիճակում է ազգային բանակի ստեղծումը:

– Անբավարար:

– Որո՞նք են պատճառները:

– Հանրապետության տնտեսական հնարավորությունները չեն համապատասխանում Հայաստանի ռազմական պահանջներին:

– Իսկ մարդկային գործո՞նը:

– Այն կբավարարի մի քանի տարի, եթե ոգեղեն գործոնը համապատասխանեցնենք մարդկայինին: Ոգեղենն ավելի է հետ մնում, քան տնտեսականը: Մենք այս չորս տարվա ընթացքում ամեն ինչ արեցինք, որպեսզի ոգեղենը հետ մնա:

– Իսկ բացի արտաքին գործոններից, ի՞նչ ներքին խանգարիչ գործոններ կան, որոնք խոչընդոտում են պաշտպանության համակարգի կայունացմանը:

– Թափթփվածություն կա: Բայց դա ավելի շատ կախված է հանրապետության մասշտաբով գոյություն ունեցող արտաքին գործոններից: Ոգեղեն եւ քաղաքական իմաստով շատ բան է կոտրվել: Բայց ես համոզված եմ, որ անկումն արդեն կանգնեցված է, եւ հակառակ քայլերն են արվում՝ բարձրացնելու մարտական ոգին ու տրամադրվածությունը: Անգամ անկումային պահերին մենք կարողացանք հավաքել համոզված ու նվիրված մարդկանց թվաքանակ (թող ինձ ներվի, որ այդ բառն եմ օգտագործում), որը կարողացավ ոչ միայն դիմագրավել, այլեւ հակահարձակման անցնել եւ լավ արդյունքի հասնել:

– Պաշտպանության նախարարությունում կադրային փոփոխություններ չե՞ն սպասվում:

– Ինչ որ փոփոխվելու էր, արդեն կատարվել է: Մնացել է, որ նախարարը փոխվի:

– Դուք կարծեմ հայտարարել էիք, որ ձեր հրաժարականի հարցը վաղուց եք դրել:

– Դա մի կողմից, բայց նախարարը կգնա այն պահին, երբ ունենա իրական, հստակ հաջողություններ: Այդ դեպքում տեղս կհանձնեմ պրոֆեսիոնալ մեկին, չնայած համոզված չեմ, որ դա կբերի իրական փոփոխության:

– Պատերազմական իրավիճակում եւ մեր երկրի պաշտպանության համակարգում ինչպե՞ս եք գնահատում մամուլի դերը:

– Ավաղ, մամուլը մինչեւ հիմա բացասական դեր է խաղացել: Ոչինչ չտալով, անընդհատ կոտրել է ժողովրդի ոգին: Քիթը խոթել է նույնիսկ այնտեղ, որտեղ մտնելու իրավունք չուներ: Երբեմն գործել է հոգուս բենամու հետախուզության:

– Իսկ այդ խնդրում ի՞նչ դեր ունի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը, որ չի կատարում:

ՍՄԲԱՏ ՀԱՅԿԱԶՅԱՆ

– Պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը պարզապես անբավարար է աշխատում: Բայց դա իր մեղքը չէ: Չկան լծակներ, տեխնիկական հագեցվածություն: Հանրապետությունում չկա լրատվական կենտրոնացում, համակարգում: Եւ ընդհանրապես, Հայաստանում ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքական լրատվությունը չի կանոնավորվում եւ չի մատուցվում ազգային շահերից ելնելով:

– Ո՞վ պետք է դա կազմակերպի:

– Իմ կարծիքով, Հայաստանի նախագահի աппարատը:

– Պաշտպանությանը վերաբերող լրատվությունը նույնպե՞ս:

– Հատկապես պաշտպանության լրատվությունը: Ադրբեջանն այդ բանն արեց բացահայտ ռազմական անհաջողություններից հետո, որ մենք դա իմանալով՝ կարող էինք ավելի շուտ անել: Սակայն դասեր չքաղեցինք բենամուց: Իմիջիայլոց, այդ մասին ես ասել եմ վեց ամիս առաջ, դեռեւս հաջողությունների փուլում, Շուշիից ու Լաչինից հետո: Ռազմական դրության մասին ասել ենք դեռ այն ժամանակ, դա էլ չարվեց: Եւ երբ հիշում եք, ես այն օրերին ասացի, որ եթե հիմա չանենք, վաղը ստիպված ենք լինելու անել: Ավաղ, բավականին կորուստներից հետո:

– Արդյոք պատճառներից մեկն էլ այն չէ՞, որ թույլ է կաղը մամուլի ներկայացուցիչների եւ պաշտպանության նախարարի միջեւ: Եթե հաճախակի լինեն մեր հանդիպումները, ապա ձեր տված կանխարգելիչ հանձնարարականների հիման վրա մենք կճշտենք նաեւ մեր քարոզչության ուղղվածությունը:

– Կուսակցական մամուլը չի առաջնորդվում ազգային շահերով, այլ կուսակցական շահերով: Ես մի օրինակ կբերեմ, կարող եք դա օգտագործել: Իմ շատ մոտիկ բարեկամ եւ ընկեր Աղվան Վարդանյանը *(«Երկիր» օրաթերթի գլխ. խմբ.-Հ.Ա.)* Շուշիի օդերեւույթի ողջ ընթացքում գիշերել է ինձ մոտ, ամեն ինչից տեղյակ էր: Բոլոր հաջողությունները կուսակցությունը կիսեց, վերագրեց իրեն, հանձին իր թերթի խմբագրի, հստակ իմանալով ամեն ինչ: Անհաջողությունների դահին նույն թերը, նույն խմբագիրը, նույն ընկերը ամենաանբարոյական կերպով հարվածեցին: Ես կուսակցական թերթերին չեմ հավատում:

– Իսկ եթե կուսակցական թերթերում կան անկուսակցական լրագրողներ, որոնք ցանկանում են աջակցել Հայաստանի անկախ պետականության կայունացմանը եւ պաշտպանության ամրապնդմանը:

– Իսկ ես ինչպե՞ս զանազանեմ, թե կուսակցական թերթերում ովքեր են անկախ ու բարոյական լրագրողները, ովքեր...

– Ովքեր այդ ցանկությունը հայտնում են:

– Դուք կուսակցական թերթի՞ց եք:

– «Ազգ»:

– Եթե իմանայի քաղաքական մամուլ է, ոչ մի հարցին չէի պատասխանի: Զզվում եմ բոլոր տեսակի քաղաքական կուսակցություններից ու մամուլից: Ատում եմ: Հայկական իրականության մեջ առավելապես:

– Դուք խոսում եք մամուլի բացասական դերի մասին, բայց ինքներդ էլ հաճախ խորհրդարանում փակ նիստերի ժամանակ կամ հեռուստատեսությամբ այնպիսի գաղտնիքներ եք հայտնում, որ հետո արտասահմանյան դիվանագետները մեր դեմ են օգտագործում:

– Ես շատ երկար եմ լռել,–եւ մինչեւ հիմա էլ ասելիքիս 98 տոկոսը չեմ հայտնել: Ստիպված եմ եղել ասել որոշ բաներ՝ զգալով, որ ներքին բենամին ավելի վտանգավոր է այդ պահին, քան արտաքինը: Ու ասել եմ այն, ինչն անհրաժեշտ էր ժողովրդին, որպեսզի սասի ներքին բենամուն: Այլապես այդ պահին ներքին լարվածությունը ավելի մեծ վնաս կարող էր հասցնել հանրապետության պաշտպանությանը, քան արտաքինը: Ես ներքին հակասություններից ավելի եմ վախեցել, քան արտաքինից:

– Օրինակ, խորհրդարանում Ձեր կողմից ասված որոշ գաղտնի խոսակցություններ հայտնի են դարձել նաեւ ամերիկյան դեսպանատան աշխատակիցներին:

– Դե, եթե խորհրդարանում կան ԱՄՆ-ի լրտեսներ, ես ոչինչ չեմ կարող ասել: Կարծում եմ, որ խորհրդարանում կարելի է ասել բաներ, որոնք միայն վերապահվում են պատգամավորներին: Իսկ որ հետո տարածում են, ես մեղավոր չեմ:

– Իսկ հակաքարոզչության մասին չե՞ք մտածում:

– Այսօր պաշտպանության նախարարությունում այդ հարցերով պետք է զբաղվի Հայկ Քոթանջյանը: Նա արտաքին քարոզչության բաժնի վարիչն է:

– Ինքնաթիռն արդեն վայրէջք է կատարում եւ մի վերջին հարց. ադրբեջանցիներն ասում են, թե մինչեւ տարեվերջ պատերազմը կդադարի, Դուք ի՞նչ կարծիքի եք:

– Ես համոզված չեմ: Տա աստված, որ այդպես լինի եւ պատերազմը իսկապես դադարի: Բայց եթե աստծո հույսին մնանք, ոչ պատերազմը կդադարի, ոչ էլ մենք հաջողություններ կունենանք: Աստծո հույսին չպետք է մնալ, եւ ոչ էլ ադրբեջանցիների հավատացումներին: Եթե մեր ձեռքբերումները մենք կարողանայինք պաշտպանել...

Ես համոզված եմ, որ այսօրվա ձեռքբերումները կկարողանանք պաշտպանել, եւ եթե կուսակցությունները չխանգարեն, այլ օգնեն, մենք կունենանք շոշափելի հաջողություններ:

Զրույցը վարեց
ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ

Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Ղարաբաղի պատվիրակությանը

Հոկտեմբերի 13-ի երեկոյան Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Երեւանում գտնվող ԳԽ նախագահի պատասխանատու Գեորգի Պետրոսյանի գլխավորած ԼՂՀ խորհրդարանի պատվիրակությունը: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հայտնեց ԼՂՀ պատվիրակության ներկայացուցիչ Համլետ Գրիգորյանը, զրույցի ժամանակ քննարկվել են շրջանի իրադրությանը, Ղարաբաղի հարցի կարգավորման ուղիներին, Հայաստանի եւ ԼՂՀ-ի միջեւ բազմակողմանի հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցեր: Գրիգորյանի խոսքերով, բոլոր սկզբունքային հարցերում կողմերը համաձայն են: Նրանք նշել են, թե կողմ են հակամարտության խաղաղ կարգավորմանը: ■

ԼՂՀ պաշտպանության պետկոմը կոչ է անում ուղղակի օգնության

ԼՂՀ-ի պաշտպանության պետական կոմիտեն երեքշաբթի օրը հայտարարեց, թե բոլոր նրանք, ովքեր մտադիր են մարդասիրական օգնություն ցույց տալ ԼՂՀ-ին, կարող են դա անել առանց միջնորդների՝ ուղիղ գծով: Պետկոմը կարծում է, թե «շարունակվող պատերազմի պայմաններում բոլոր ռեսուրսների խիստ կենտրոնացումը կարող է աջակցել միայն դրանց արդյունավետ օգտագործումը պաշտպանության նպատակով»: Հայտարարության մեջ նշված է, թե կոմիտեն «այլ ճանապարհներով հանրապետությանն ուղղված միջոցների օգտագործման համար պատասխանատվություն չի կրում»: ■

Ղարաբաղում սկսվել է ուսանողների զորահավաք

ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի որոշման համաձայն, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում ծառայելու են զորակոչվում 18 տարին բոլորած ուսանողները: Զորահավաքի են ենթակա նաեւ այն ղարաբաղցի ուսանողները, որոնք սովորում են ԼՂ-ից դուրս: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հայտնեցին ԼՂՀ տեղեկատվության եւ մամուլի պետդեպարտամենտում, այդ որոշումը թելադրված է շրջանում իրադրության սրմամբ եւ Ադրբեջանի նվաճողական քաղաքականությամբ: Պաշտպանության պետկոմը դիմել է Հայաստանի համապատասխան մարմիններին, խնդրելով աջակցել Հայաստանի բուհերում եւ տեխնիկումներում սովորող ղարաբաղցի ուսանողների զորահավաքը: Ինչպես հայտնի է, ԼՂՀ ԳԽ-ի որոշմամբ, վերջերս Ղարաբաղում հայտարարվել է ռազմական դրություն եւ 18-45 տարեկանների զորահավաք: ■

Ադրբեջանի խորհրդարանը լուծարեց Ղարաբաղի Մարտակերտի շրջանը

Ադրբեջանի միլլի մեջլիսը երեքշաբթի օրը Մարտակերտի շրջանը լուծարելու որոշում է ընդունել: Ինչպես հայտնում է «ԻՖ»-ի թղթակիցը, նրա հողերը բաժանված են Քելբաջարի, Ղուբալիի եւ Թար-Թարի շրջանների միջեւ: Ադրբեջանի խորհրդարանի դեկավար Ի. Համբարովը նշեց, թե այդ միջոցը ձեռք է առնվել «Ադրբեջանի ղարաբաղյան գոտու ավելի արդյունավետ տարածքային վարչավարության նպատակով»: Այն հնարավորություն կտա ավելի օրերաշիվ եւ կազմակերպված լուծել այդ շրջանի սոցիալ-տնտեսական հարցերը եւ տեղավորել փախստականներին: ■

4,5 հազար սպանված ադրբեջանցի զինվոր

ԼՂՀ ինքնապաշտպանական կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի վկայությամբ, ադրբեջանական ազգային բանակը հունիսի 12-ին սկսած լայնածավալ հարձակումից առայսօր կորցրել է մոտ 20 հազար զինվոր, որից 4,5 հազարը՝ սպանված: Ըստ վիճակագրության, պատերազմական պայմաններում 1 սպանվածը հավասարվում է 4 վիրավորի: ■

digitised by A.R.A.R.@

Երրորդ սկզբունքը

Հայերն ու օսերը երկուսն էլ հնդեւրոպական ժողովուրդներ են: Ընդ որում, օսերը հնդեւրոպական միակ ժողովուրդն են Հյուսիսային Կովկասում: Նրանք նախապես կազմավորվել են իրանական ծագում ունեցող սկյութներից ու սարմատներից: Նրանց ազգագոյացման վերջին փուլը ալանների ցեղն է, որը Հյուսիսային Կովկասում հայտնվել է մ.թ. առաջին դարում:

Հոների արշավանքից հետո (4-րդ դ. վերջ) օս-ալանների ցեղերն ամուր հաստատվել են Հյուսիսային եւ Հարավային Օսիաների տարածքում:

Սկսած ալանների ժամանակաշրջանից, երեւան են եկել հայ-օսական պարբերական հարաբերությունները: Նախապես դրանք դրսեւորվել են ալանների եւ Մեծ Հայքի թագավորության միջեւ ընդհարման ձեւով, այնուհետեւ ընդգրկել են նաեւ հասարակական ու քաղաքական կյանքի զանազան բնագավառներ: Հայ-օսական հնագույն հարաբերությունների վերաբերյալ պահպանվել է Մովսես Խորենացու հաղորդած հայտնի ավանդությունը Հայոց Արտաշես թագավորի եւ ալանական արքայադուստր Սաթենիկի ամուսնության վերաբերյալ: 316 թվականին ալանները ներխուժել են Հայաստան, եւ Հայոց Տրդատ 3-րդ թագավորը խաղաղություն հաստատելու նպատակով ամուսնացել է արքայադուստր Աշխենի հետ: 5-րդ դարում հյուսիսից Անդրկովկաս արշավանքները կանխելու նպատակով Սասանյան Իրանը Դարյալի կիրճի պաշտպանությունը հանձնարարել է Սյունիքի հայերին: 571-72 թթ. ալանները եռանդուն մասնակցություն են ունեցել Սասանյանների դեմ հայերի պայքարում: 5-7-րդ դդ. հայերը փորձել են ալանների մեջ քրիստոնեություն տարածել, թեեւ այն ալանական թագավորությունում հաստատվեց միայն 10-րդ դարում՝ բյուզանդական միսիոներների միջոցով: 17-րդ դ. սկզբին օսերի մեջ վերջնականապես քրիստոնեությունն ամրապնդել սկսեցին ռուսները, սակայն, օս շատ գիտնականների գնահատմամբ, ժողովուրդը կենցաղով եւ ավանդույթներով այնուամենայնիվ մնաց հեթանոս: 1774-ին Ռուսաստանի կազմի մեջ մտավ Հյուսիսային Օսիան, իսկ 1801-ին՝ Հարավայինը:

Հայ-ալանական հարաբերությունների վերաբերյալ պատմական այս փոքրիկ էսքիզը հանգեցրեց հեղինակի՝ պատմագիտության թեկնածու, դոցենտ Ռոզալիա Գաբրիելյանի հետ ԱՊՀ թեժ կետերում եւ դրա սահմաններից դուրս մի քանի ընդհանուր խնդիրներ վերլուծելու մտքին:

– Տիկին Գաբրիելյան, հավանաբար շատերին տարօրինակ կթվա, որ ալանները նույն օսերն են: Որտեղի՞ց է նման տարընթերցումը:

– Ալաններ էթնոնիմը (ժողովրդի անվանումը) հունական ծագում ունի, ինչպես ասենք, աղվաններ, հայեր: Նման անվանումով նրանք հայտնի են եղել նաեւ հայկական աղբյուրներում՝ սկսած 5-րդ դարից: Այժմեական *օս* անվանումը վրացական ծագում ունի: Վրացիներն այդպես են անվանել՝ նրանց ճանաչելով Մեծ Լիախվի գետի վերին հոսանքում ապրող ալանական *օվսեր* ցեղի միջոցով:

– Ժողովուրդն այժմ ոչ միայն քաղաքականացված, այլեւ, եթե կարելի է այդպես արտահայտվել, պատմականացված է: Իմիջիայլոց, մեկը մյուսի հետեւանքն է, հավասարազոր՝ քաղաքականությունը պատմության միջոցով հասկանալուն: Եւ այստեղ համեմատություններից խուսափել չես կարող: Հարավային Օսիան համարում են չորրորդ թե հինգերորդ Ղարաբաղ: Առանձնապես ուրախալի չէ, իհարկե, որ Ղարաբաղը դարձել է փիկացած կետերի չափման միավոր, սակայն... ո՞րն է այդ «չափման համակարգի» իրավազորությունը:

– Այստեղ պատմությունն օգտագործվում է որպես քաղաքական վերափոխությունների գործիք: Սակայն դրա փորձը, հաճախ նաեւ փաստերը, կտրվում են պատմական երեւույթների զարգացման ընդհանուր կոնտեքստից: ԽՍՀՄ փլուզման հետ սկսվեց ոչ միայն էթնիկական, այլեւ տարածքային սահմանազատման երեւույթը: Վերջին հանգամանքը արդի ԱՊՀ «փիկացած կետերի» անկյունաքարն է: Լինի՞ դա ԼՂՀ-ն, Հարավային Օսիան, Ղրիմը, Պրիդնեստրովիեն, Աբխազիան եւ այլն: Այդպիսին են նաեւ համանման երեւույթները Հարավսլավիայում եւ Արեւելյան խմբավորման այլ երկրներում:

– Այսինքն, հակադրվում են զուգահեռաբար գործող երկու՝ Հելսինկիի համաձայնագրով ընդունված հետպատերազմյան սահմանների անձեռնմխելիության եւ ազգերի ինքնորոշման սկզբունքները: Վերհիշելով վերջին ժամանակների «առանց սահմանների դեպի Եվրոպա» միտումները, խոր ցավով ես դիտում Արեւելյան Եվրոպայում տեղի ունեցող երեւույթները: Առավել եւս, ակնհայտ է, որ «առանց սահմանների Եվրոպա» գաղափարը հնարավոր դարձավ այդ համակարգի երկրների ազատության, անկախության համար զրեթե հազարամյա պայքարով: Այսինքն, միայն ազատության գիտակցությունն է ծնում հավասար իրավունքներով ամբողջացման ցանկություն: Սակայն հազիվ թե մենք եւս հազար (կամ հարյուր, նույնիսկ տասը) տարի կարող ենք թույլ տալ մեզ ինքնահաստատման այդ պայքարը մղել, որը վարեց Արեւմտյան Եվրոպան: Ուրիշ ժամանակ է, ուրիշ արագություններ, եւ վերջապես, որ շատ կարեւոր է, ուրիշ գենք: Չեզ չի՞ թվում, որ ԱՊՀ-ում եւ Արեւելյան Եվրոպայում հետպատերազմյան տրամաբանությամբ թելադրված սահմանների անձեռնմխելիության մեխանիկական երեւույթը հակադրվում է արդի տրամաբանությանը եւ երեւույթներին: Գուցե ժամանակն է, որ համաշխարհային հանրությունը գտնի նոր, հաջորդ սկզբունքը:

– Թվարկված բոլոր թեժ կետերում պատկերը նույնն է: ԱՊՀ խոշոր պետությունները ձգտում են պահպանել տարածքային ամբողջականությունը, իսկ դրանց պետական-տարածքային կազմավորման մեջ մտած ժողովուրդները պայքարում են անկախության եւ ինքնորոշման իրավունքի համար:

– Այդ դեպքում ստացվում է, որ յուրաքանչյուրը, իրավաբանորեն հիմնավորված, միջազգային իրավունքների սահմաններում բողոքարկում է իրեն ձեռնտու սկզբունքներով: Հասարակ տրամաբանությունը հուշում է, որ երբ երկու զուգահեռ դրույթներ դառնում են ուղղահայաց, նշանակում է՝ հասունացել է նոր տեսության ժամանակը: Հարկավոր է երրորդ սկզբունքը:

– Համաձայն եմ: Ավելին, որպես պատմաբան կարող եմ հայտնել իմ տեսակետը: Ինձ համար պատմությունը գոյություն ունի միայն յուրաքանչյուր ժողովրդի պատմական զարգացման տեսանկյունով՝ այլ ոչ թե տարածքային կամ վարչական կազմավորմամբ: Ի հաստատումն՝ միայն մի փոքրիկ օրինակ: Նախկին ԽՍՀՄ-ում պատմության բոլոր դասագրքերն անվանվում էին այսպես՝ «Ադրբեջանի պատմություն», «Ռուսաստանի պատմություն», «Ղազախստանի պատմություն» եւ այլն: Միայն մեզ մոտ էր կոչվում «Հայ ժողովրդի պատմություն»: Այսինքն, այդ երրորդ սկզբունքը, որի մասին դու խոսում ես, հարկավոր է կառուցել յուրաքանչյուր ժողովրդի պատմական փորձի հիման վրա, այն համադրելով ազգի ինքնորոշման իրավունքի հետ, որպիսին դրսեւորում են խլացված ազատության եւ իրավունքի այն մարդասիրական սկզբունքները, որոնք մարդկությունը պաշտպանել է հազարամյակների ընթացքում: Այն դեպքում, երբ չեմ ժխտում, ժամանակի ինչ-որ հատվածում արդարացված սահմանների անձեռնմխելիության սկզբունքը առավելապես դառնում ազգերի քաղաքակիրթ ձեւով զարգացման գործում միակ արգելակը, միջազգային հանրությունը ճանաչեց հարավսլավական երկու հանրապետությունների անկախությունը: Այսինքն, անհնարին ոչինչ չկա:

– Սակայն դա համադրման չէ, որպիսին տարածքային-նոր կազմավորումներում հաջորդ քայլը «էթնիկական զտման» երեւույթն է... Այսինքն այդ օրինակն արդեն, որը կարող է նախադեպ դառնալ, առավելապես չի իրագործվի հատկապես «երկրորդական» այնպիսի երեւույթի պատճառով, ինչպիսին է էթնիկական զտումը, եւ ասված գիտի, թե ինչ կլինի հետո: Մի խոսքով, զուգահեռ գործող այդ երկու սկզբունքներից ցանկացածի կիրառումը, եթե անգամ դրանցից մեկնումեկը բեզ շատ ձեռնտու է, խնդրի արմատական լուծում չէ դրա էական նշանակությամբ: Որակական նոր մակարդակ է հարկավոր, քաղաքական լուծումներ եւ տնտեսական ջանքեր:

– Ինձ թվում է, նոր սկզբունքի որոնումն անխուսափելի է, որի առջեւ կանգնած են ոչ միայն ԱՊՀ-ի եւ Արեւելյան Եվրոպայի երկրները: Հակասական նման իրադարձություններ գոյություն ունեն նաեւ այսպես կոչված քաղաքակիրթ աշխարհում, թեեւ դրանք այնպես արված չեն, ինչպես մեզ մոտ: Դա անգլո-իռլանդական հակադրությունն է, հունա-հարավսլավականը, կիպրոսյանը եւ այլն: Նման հակասություններ կան եւ Կանադայում: Այսինքն, անգամ այսպիսի փոքրիկ վերլուծությունը հանգեցնում է նրան, որ եթե մարդկությունը չի ուզում այրվել էիկացած կետերի կրակում, անհապաղ պետք է գտնի լուծման նոր բանալի:

Զրույցը վարեց
ԻԳԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Համերաշխությամբ լուծենք վիճելի հարցերը

Հոկտեմբերի 3-ին ունկնդրելով պաշտպանության գծով պետական նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանի հեռուստատեսային հարցազրույցը, եկա այն կարծիքին, թե նա ձգտում է, որ Հայաստանը պատերազմ հայտարարի Ադրբեջանին:

Մի՞թե պ. Մանուկյանը հավի չի առնում այն վիճակը, որում գտնվում են երկու պետությունները, երբ նրանցից մեկն ունի ավելի մեծ ներքին պաշարներ եւ արտաքին հաղորդակցական կապեր ու պաշտպաններ, իսկ մյուսը զգալիորեն զրկված է դրանցից: Բավական է նկատի առնել հացի հարցը, որի լուծման համար կառավարությունը հացահատիկ է խնդրել Թուրքիայից:

Այս պայմաններում մեզ ձեռնտու է ընտրել Ղարաբաղի խնդրի լուծման բանակցությունների ուղին, ավելի ուժեղացնելով այնտեղի հայության պաշտպանությունը բոլոր միջոցներով: Դա արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ հայ ժողովուրդը գործի միասնությամբ եւ իր աշխատանքով հնարավորություններ ընձեռնի հանրապետության նախագահին ու կառավարությանը, առավել վճռականությամբ ու արդյունավետությամբ կատարելու իրենց վրա դրված պարտականությունները:

Ինչ վերաբերում է հանրապետության ներսում տիրող անօրինականությունների դեմ անխիր պայքարի անհրաժեշտությանը, ապա ես համամիտ եմ պ. Մանուկյանի հետ, քանի որ գողերի ու կաշառակերների անպատիժ մնալը սննդի պակասից էլ ավելի զայրույթ է հարուցում եւ ջլատում ժողովրդի ուժերը:

Գ. ՄԱՐԻԿՅԱՆ
Ֆիզմաթ գիտությունների թեկնածու

Սոցատ բաժինը ալյուր է բաժանում

Երեւանի գործկոմի սոցիալական ապահովության բաժինը այս օրերին երեւանաբնակ զոհված ազատամարտիկների ընտանիքներին ալյուր է բաժանում: Հայաստանի սահմաններից դուրս ձեռք բերված 15 տոննա ցորենը (կիլոգրամը մոտ 17 ռ. ինքնարժեքով) տեղափոխվեց Երեւան, աղացվեց: Ստացվեց 11 տոննա՝ 204 պարկ այուր, որը մեկական պարկ անվճար բաժանվում է զոհվածների ընտանիքներին: Պաշտպանության նախարարությունից ձեռք է բերվել զոհվածների ցուցակը, որտեղ Արցախում եւ սահմանամերձ շրջաններում զոհված երեւանաբնակ 215 մարտիկների անուններ են նշված:

Երեւանի գործկոմի սոցատ բաժնի վարիչ պրն. Թումանյանի հետ զրույցից իմացանք, որ ալյուրի բաշխման հետ կապված մի շարք դժվարություններ կան: Նախ, պաշտպանության նախարարությունից ստացված ցուցակներն ամբողջական չեն, մոտ 30 նոր անուններ են հայտնաբերվել, ապա դժվարություն կա հարս-կեսուր հարաբերության հետ կապված, խորհրդային զինված ուժերում ազգային հողի վրա վերջին տարիներին զոհված երիտասարդների ծնողներն էլ են դիմում ալյուր ստանալու խնդրանքով: Վերջինս այժմ Երեւանում բնակվող (գրանցում չունեցող) զոհված արցախցի ազատամարտիկների ընտանիքների հարցն է: Այս հարցերով զբաղվում է բաժնի բաշխման հանձնաժողովը: Քանի որ ալյուրը չի բավականացնում եւ դեռ նոր անուններ են հայտնաբերվում, պիտի նոր գնումներ կատարվեն եւ ամենայն հավանականությամբ կբավարարեն բոլորին: Հարս-կեսուր խնդիրը լուծվել է հոգուս զավակների, եթե կան երեխաներ՝ ստանում է զոհվածի կինը, եթե չկան՝ ծնողները: Արցախցի զոհերի՝ Երեւանում բնակվող ընտանիքները հավասարապես նույնպես կբավարարվեն: Վերջում պետք է նշել, որ սա միջոցառումների համակարգի առաջին քայլն է:

Ա. Օ.

Բաքվի մանկական քաղաքական հաղորդումներն ընդդեմ հայ ժողովրդի

Ինչպես Ստեփանակերտից հայտնում է «Նոյյան տապան»ի թղթակիցը, վերջերս Բաքվի ռադիոյի մանկական հաղորդումներում ավելի հաճախ են հաղորդվում այնպիսի հեքիաթներ, որոնց ամենաբացասական հերոսները... հայերն են: Այդ հեքիաթների սյուժեները լցված են ադրբեջանցի երեխաների նկատմամբ հայերի անմարդկային դաժանություններով: Այսպես այդ հեքիաթներից մեկը պատմում է այն մասին, թե ինչպես հայերը գերեվարել են ադրբեջանցի մի խումբ երեխաների եւ նրանց մի քանի օր սոված պահել: Հետո, պատմում է հաղորդավարը, սովալլուկ մանուկների սենյակ են բերում մի աման առյուր եւ սկսում երեխաներին ծեծել միմյանց: Առյուրը հասնում է միայն հաղթողին: Ամբողջ հեքիաթը համեմված է ադրբեջանցի երեխաների սարսափելի տանջանքների նկարագրությամբ: Հեքիաթն ավարտվում է խոհիմաս ամփոփմամբ. *«Երեխաներ, լսող եղեք, կատարեք մեծերի բոլոր պատվիրանները, թե չէ կընկնեք հայերի ձեռքը»:* ■



Լորիս Ճգնավորյանը դարձավ 55 տարեկան

Ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտները օրական ձրի երեք լավաշ են ստանում

Հոկտեմբերի 13-ին լրացավ Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավար Լորիս Ճգնավորյանի 55-ամյակը: «Նոյյան տապան»ի թղթակիցը դիմեց նրան մի քանի հարցի պատասխանելու խնդրանքով: Այն հարցին, թե որն է հանդիսատեսների մեծ համակրանքի եւ նույնիսկ տնտեսական ճգնաժամի պայմաններում նվագախմբի հաջողության գաղտնիքը, Ճգնավորյանը պատասխանեց, թե ոչ միայն հացիվ է կենդանի մարդը, նա հոգեւոր սննդի կարիք էլ է զգում: Խոսելով ֆինանսական դժվարությունների մասին, Լորիս Ճգնավորյանը հայտնեց, թե ոչ ոք առպահովագրված չէ դրանցից: Նա նշեց այն ահռելի օգնությունը, որ ցույց է տալիս ՀԲԸՄ-ն, մասնավորապես տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնը, որը ֆինանսավորել է ողջ համերգաշրջանը: Նոյեմբերի 22-30-ը կկայանան նվագախմբի համերգները Հունաստանում, իսկ դեկտեմբերի 8-ից մինչեւ ամսվա վերջը՝ Ավստրիայում: Նախատեսվում են երկուական համերգներ Վիեննայում եւ Աբենֆում, որտեղ համերգների տեսագրությունը կցուցադրվի հեռուստատեսությամբ: «Նոյյան տապան»ի այն հարցին, թե ինչպես ծագեց բոլոր երաժիշտներին լավաշ բաժանելու գաղափարը, Ճգնավորյանը պատասխանեց, թե երաժիշտը պետք է սնվի նորմալ ռեժիմով, հանգստանա եւ ամեն օր ժամանակին ներկայանա փորձին, ինչը միշտ չէր հաջողվում հացի երկար հերթերում կանգնելու պատճառով: Այդ պատճառով էլ Ճգնավորյանը որոշեց դիմել հովանավորներին՝ հաց գնելու համար: Օրական յուրաքանչյուր երաժիշտ ստանում է երեխական լավաշ: ■

digitised by A.R.A.R.@

ՆՈ՞Ր ԵՆ ԱՐԴՅՈՔ «ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արեւելք» վերլուծական կենտրոն

Գերտերությունները եւ ցանկացած արմատականություն խանդելու ու ոչնչացնելու ամերիկյան ոլեսական մեքենան շարունակում է անխնա գործել հին աշխարհում, բրբուռների տակ տորելով նախկին սահմանները եւ հաստատելով նորերը: Այդ մեքենայի հզոր ու ահարկու շունչը հեզգհեսե ավելի է զգացվում մեր դռանը՝ Թուրքիայում եւ Միջին Արեւելքում: Մեզ հասկացված դերի եւ ոլահանջվող գործողությունների ցանկացած ուղղագիծ եւ սոսկ ենթակայական ընկալում կարող է հերքական անգամ ճակատագրական լինել մեր ոլեսականության ու ժողովրդի համար:

Ինչոլես նշել էինք նախորդ հոդվածում («Ազգ», 30 սեպտեմբեր), ԱՄՆ-ի միաբեւեռ գերիշխանության հաստատման, միջազգային ռազմաքաղաքական կազմակերոությունների միջոցով աշխարհը վերահսկելու եւ տարբեր շրջաններում ամեն տեսակ արմատականության դեմ ոլայքարելու գաղափարները ձեւավորված վիճակում քաղաքական օրակարգ էին մտցվել դեռեւս դարի առաջին տասնամյակներում, իսկ առաջին համաշխարհային ոլատերազմից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակահատվածում քաղաքական ստրատեգիան ուղղված էր այդ խնդիրների հետեւողական հանգուցալուծմանը: Պետք է հաշվի առնել, որ XX դարի առաջին տասնամյակներում դեռեւս ձեւավորման ընթացքում էին իսլամական արմատականության եւ համաարաբական ազգայնականության գաղափարախոսությունները, ուստի միջինարեւելյան արմատականության մեր օրերի ընկալումը բացակայում էր: Սակայն, դարասկզբին արդեն արմատականություն էր դիտարկվում այն ամենը, ինչն ուներ ամուր ավանդույթներ եւ հիմքեր, իսկ դրա կրողները՝ բոլոր այն ժողովուրդները, ովքեր իրենց ուժեղ էին զգում սեփական կայունությունների հովանու տակ եւ չէին ոլատրաստվում վերակառուցելու ներքին կյանքն ու արտաքին հարաբերությունները «նոր աշխարհակարգի» ամերիկյան տարբերակի ոլահանջների համաձայն:

Դարասկզբի արմատականությունը կենտրոնացած էր ամուր ավանդականություն ունեցող կայունություններում, որոնք ենթակա չէին արագընթաց տեղաշարժերի: Այդ իսկ ոլատճառով առաջին աշխարհամարտի արդյունքներն օգտագործվեցին նախ եւ առաջ կայունություններին հարվածելու համար, ընդ որում, անկախ այն բանից, դրանք ոլատերազմում դաշնակից էին ԱՄՆ-ին, թե հակառակորդ: Այդ կայունությունները չորսն էին՝ Օսմանյանը, Ռուսականը, Բրիտանականը եւ Ավստրո-Հունգարականը: Բնական է, որ չորսին միաժամանակ համարժեք հարվածներ հասցնել հնարավոր չէր, մանավանդ որ Մեծ Բրիտանիան հաղթանակած դաշնության անդամ է: Օբյեկտիվ ոլատճառներով հարվածի ենթակա երկրների թվում էր դասվում նաեւ Ֆրանսիան, որը թեեւ կայունության դասական տարբերակ չէր, սակայն հարյուրամյակներ շարունակ կենտրոնական դեր խաղալով եվրոոլական եւ համաշխարհային քաղաքական-քաղաքակրթական ընթացքի մեջ, գնահատվում էր իբրեւ լիարժեք գերտերություն:

Կայունությունների հիմքերին հարվածելու ռազմաքաղաքական ուղիները խնայված էին Վերսալի հաշտության ոլայմանագրի վիլսոնյան տարբերակում: Նույն վիլսոնյան տարբերակի 14 կետերը նաեւ լավագույն վկայությունն էին այն բանի, որ ԱՄՆ-ը աշխարհի վերաբաժանումը ձգտում էր իրականացնել ոչ թե հոգուս հաղթանակած տերությունների շահերի, այլ հաճախ ի վնաս նրանց, առանցքայինը համարելով կայունությունները փլուզելու խնդիրը: Ու թեեւ հետոլատերազմյան աշխարհի բախտը որոշած Վերսալ-Վաշինգտոնյան համակարգում (դրա մեջ մտնում են 1919 թ. Վերսալի, 1919 թ. Սեն-Ժերմենի, 1919 թ. Նեյոլի, 1920 թ. Տրիանոնի, 1920 թ. Սեւրի խաղաղության ոլայմանագրերը, որոնց եզրափակիչ ակտը 1920-21 թթ. Վաշինգտոնի խորհրդաժողովն էր) չհաջողվեց իրականացնել բոլոր նոյաստակները, այնուամենայնիվ նվազագույն ծրագիրը կատարված էր: Չխորանալով մանրամասների մեջ՝ անդրադառնանք կայունությունների ճակատագրերին եւ զուգահեռներ անցկացնենք այսօրվա իրողությունների հետ:

Առավել դաժան ճակատագրի արժանացան ոլատերազմում ոլարտված Ավստրո-Հունգարական եւ Օսմանյան կայունությունները: Այսոլես, Ավստրո-Հունգարիան ոչ միայն դադարեց գոյություն ունենալուց, այլեւ նպխ եւ առաջ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ արվեց ամեն ինչ նրա վերածննդի հնարավորության նշույլն իսկ ոչնչացնելու համար: ԱՄՆ-ը մինչեւ վերջին ոլոմեն ոլահանջում էր վերացնել Ավստրիան իբրեւ ոլետական միավոր եւ ընդգրկել նրա տարածքները ոլարտված Գերմանիայի սահմանների մեջ: Միայն Ֆրանսիայի եւ Բրիտանիայի համառության շնորհիվ էր, որ այդ ծրագիրը չիրականացվեց: Հունգարիայի տարածքներն անդամահատվեցին մինչեւ նվազագույնը եւ նա հատուկ վասաքաղաքերով ոլարտավորություն վերցրեց երբեք քայլեր չձեռնարկել կայունության վերականգնման ուղղությամբ:

Ոչնչացման նույն տարբերակն սպառնում էր նաեւ Օսմանյան կայունությանը, ուր կենտրոնական խնդիրը նրա ասիական-աֆրիկյան ածանցյալ տարածքների բաժանումը չէր, այլ կայունության կորիզը կազմող ժողովրդի՝ թուրքերի տարածքների հավասարեցումը նվազագույնի, իսկ հնարավորության դեպքում նաեւ բացարձակ վերացումը: Թուրքական ոլետության փրկության գործում տարաբնույթ քաղաքական գործոնների հետ մեկտեղ առանցքային դեր խաղաց քեմալական շարժման գաղափարախոսական հիմքը: Աբաքուրքը, ճիշտ ընթռնելով ժամանակի ոլահանջները, ինքնակամ ոչնչացրեց օսմանիզմի եւ իսլամական ընդհանրության մարմնավորման կերոարները, որոնք Օսմանյան կայունության արմատականության երկու առանցքային արտահայտություններն էին, նոր ոլետության գաղափարախոսության մեջ դնելով ավանդույթներից եւ հին ժառանգությունից հրաժարվելու երաշխիքները: Բավարարո՞ւմ էին արդյոք ներկայացված երաշխիքներն ամբողջովին ԱՄՆ-ին, թե ոչ, բայց նա, նաեւ այլ գործոնների ազդեցության տակ, այլեւս հետեւողականություն չցուցաբերեց թուրքական ոլետության առավելագույն մասնատման հարցում, աչք փակելով իր իսկ կողմից առաջադրված հայկական ոլետության, քրդական տարածքների ստեղծման, թուրքական տարածքներում գաղութային ռեժիմ հաստատելու եւ մեծ Հունաստանի ձեւավորման ծրագրերի խափանման վրա:

Ռուսական կայունության հետ հաշվեհարդարի խնդիրը եւս հստակեցված էր: ԱՄՆ-ին ֆիզ հուզեցին ռուսական հեղափոխության արդյունքները, եւ ինչոլես վկայում են փաստերը, ԱՄՆ-ը ոլատրաստ էր ճանաչելու ռուսական նոր ոլետությունը, եթե բոլշեւիկները հրաժարվեին կայունության վերականգնումից, իրենց սահմաններից դուրս թողնելով Ուկրաինան, Անդրկովկասը եւ Միջին Ասիան (Մերձբալթիկան 1919-40 թթ. կայունությունից դուրս էր): Անզիջում բշնամանքը կոմունիստական Ռուսաստանի նկատմամբ միս ու արյուն ստացավ միայն այն բանից հետո, երբ ոլարզ դարձավ, որ բոլշեւիկները նոյաստակ ունեն վերականգնելու կայունությունը հին սահմաններում եւ վերականգնելու ռուսական արմատականությունը, թեկուզ եւ առերեւույթ նոր սկզբունքների հիմքի վրա: Արեւմտյան ինտերվենցիան Ռուսաստանում ձախողվեց, նախկին կայունության տարածքները հիմնականում վերականգնվեցին եւ ռուսական գործոնի հաղթահարման խնդիրը հանձնվեց հաջորդ տասնամյակներին:

Շատ ավելի դժվար լուծելի էին դաշնության անդամների՝ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի հետ կապված խնդիրները: Այս երկուսի տանդեմն էր, որ հիմնականում խափանեց Եվրոոլայի վերածնման ամերիկյան տարբերակը, դդելով Եվրոոլան երկրորդ աշխարհամարտին: ԱՄՆ-ը հետեւողականորեն ձգտում էր ստեղծել ուժեղ եւ մեծ Գերմանիա (համեմատաբար նորաստեղծ ոլետական կազմավորում, որը զուրկ էր արմատականությունից), աշխարհամարտում ոլարտված այդ երկրին հանձնելով Ավստրիան, Սուդետի մարզը, Սաարի ավազանը, բայց հանդիպեց Լոնդոնի եւ Փարիզի այն ժամանակ անհաղթահարելի դիմադրությանը: Հետագայում, ամերիկյան դոլլարների եւ բողոքության վրա բարձրացած ֆաշիստական Գերմանիան ոլատերազմի առաջին փուլում կետ առ կետ իրականացնում էր 1918 թ. Վիլսոնի ծրագիրը, իսկ երկրորդ փուլում շոշափելի, եւ ինչոլես ցույց տվեց ոլատմությունը, անուղղելի հարվածներ հասցրեց Ֆրանսիային եւ նոր Ռուսաստանին:

Այն, ինչ չհաջողվեց առաջին աշխարհամարտից հետո, իրականացրեց երկրորդը: Գերմանական շուրջ հնգամյա օկուպացիան կոտրեց ֆրանսիական գերտերության ավանդականության ողնաշարը եւ հաջորդ չորս տասնամյակների ճանապարհը, ինքնահաստատման ոլարբերական, հախուռն ընդվզումներով հանդերձ, այնուամենայնիվ, հնազանդության ճանապարհն էր: Վերսալ-Վաշինգտոնյան համակարգում Մեծ Բրիտանիայի նկատմամբ ԱՄՆ-ի տարած միակ հաղթանակը ծովային տարածքներում նրա միանձնյա գերիշխանության վերացումն էր եւ ամերիկյան տնտեսության համար համաշխարհային գաղութային համակարգի դռների բացումը: Երկրորդ աշխարհամարտից եւս Բրիտանիան դուրս եկավ նվազագույն կորուստներով եւ այսօր հոլարս մենակությամբ շարունակում է հակադրել սեփական արմատականությունը ԱՄՆ-ի «նոր աշխարհակարգին»: Սակայն, երկու աշխարհամարտերի հետեւանքով կորցնելով գաղութները, ռազմաքաղաքական եւ տնտեսական առաջնորդի դերը, Մեծ Բրիտանիան այժմ խոցելի է առավել, քան երբեք, եւ ներկայիս ոլայքարը երկրի ներսում ու միջազգային ասպարեզում «միավորված Եվրոոլայի» գաղափարի շուրջ վճռորոշ նշանակություն ունի «նոր աշխարհակարգով» առաջադրվող ոլահանջներին ենթարկվելու կամ ինքնուրույնությունը ոլահոլանելու հարցի տեսանկյունից:

Ինչոլես արդեն գրվել է, «նոր իրողություններում» շարունակվում է հին ոլայքարը ամերիկյան համընդհանուր գերիշխանության ճանապարհին կանգնած գլխավոր խոչընդոտի՝ արմատականության դեմ, որի հիմնական կենտրոններն այսօր երեքն են՝ Ռուսաստանը, Միջին Արեւելքը եւ Եվրոոլայում Մեծ Բրիտանիան: Թեեւ ոլայքարը բոլոր երեքի դեմ խիստ փոխկապակցված է, սակայն Հայաստանի համար առավել կարեւորություն ունեն երկու ճակատները՝ ռուսականն ու Միջին Արեւելքը: Ռուսական եւ արաբամահմեդական ճակատներում իրադարձությունների զարգացման տրամաբանությանն ու ընթացքին արդեն բազմիցս անդրադարձել ենք եւ ցայսօր կանխատեսված իրադարձություններում որեւէ շեղում չի նկատվել:

Բայց վերջին երկու տարվա ընթացքում վերակենդանանում է մեկ միկրոճակատ եւս՝ Օսմանյան կայունության ժառանգորդը՝ Թուրքիան: ԱՄՆ-ի իսկ բողոքությամբ եւ հովանավորությամբ, Աբաքուրքի ոլատգամները խախտելով, թույլատրելի սահմաններից դուրս եկած Թուրքիան ակնհայտորեն նշանառության տակ է վերցվում: Թուրքական գործոնը արդյունավետորեն օգտագործվեց եւ օգտագործվում է ռուսական եւ իսլամական ճակատներում ոլայքարի հաջողությունն աղահովելու համար, սակայն օրեցօր այդ խնդրի իրականացման հետեւանքով ինքը Թուրքիան խախտում է ազգային անվտանգության աղահովման նոյաստակով դարասկզբին դրված արգելքները եւ անխուսափելիորեն հարվածի տակ է ընկնում: Սեփական ուժի նկատմամբ ինքնավստահությունն ու ազգայնականության ալիքը, հաճախ նաեւ իշխանությունների կամքին հակառակ, վերադարձնում են Թուրքիային կայունության լուսապսակը, ինչը որքան որ գայթակղիչ է եւ շոյում է որոշակի շրջանակների փառասիրությունը, նույնքան էլ վտանգավոր է հեռանկարի առումով: Հաշվի առնելով Վիլսոնի ծրագրի առանցքային հիմնական հարցերի իրականացման հետեւողականությունը, որն արտահայտվում է այսօրվա քաղաքականության մեջ եւս, հիմքեր կան կարծելու, որ Անատոլիայում եւ ընդհանրապես Միջին Արեւելքում սահմանների վերաձեւման խնդիրը բաց է մնում:

Ի՞նչ է խոստանում այս իրավիճակը Հայաստանին եւ հայ ժողովրդին: Առաջին հերթին նորանոր, ծանր եւ ոլատասխանատու փորձություններ: Մեր ազգային հիմնահարցերը եղել եւ մնում են տարբեր հարթություններում, տարբեր նոյատակների ծառայեցմանը ենթակա գործոններ: Մեզ հասկացված դերի եւ ոլահանջվող գործողությունների ցանկացած ուղղագիծ եւ սոսկ ենթակայական ընկալում կարող է հերքական անգամ ճակատագրական լինել մեր ոլետականության եւ ժողովրդի համար: Չոլետք է մոռանալ, որ առ այսօր նվազագույն կորուստներով, սեփական շահերի առավելագույն ոլաշտպանությամբ ամերիկյան գերիշխանության հաստատման ճանապարհին դիմակայել են երկու երկիր՝ Բրիտանիան եւ Թուրքիան, որոնք համատեղ գործելու մեծ փորձ ու կարողություններ ունեն: Կարեւոր է գիտակցել նաեւ, որ ոչինչ չի արվում հանուն որեւէ մեկի շահերի, առավել եւս շահարկման ենթակա միավորների շահերի, այլ միշտ ընդդեմ որեւէ մեկին, իսկ մեթոդների դաժանությունն ու ծրագրերի իրականացման հետեւողականությունը ոլարզունակ խուսանավումների հույսեր չի թողնում: Ինչոլես շատ այլ հարցեր, ոլատերազմ թե խաղաղություն երկընտրանքը եւս մեր կամքից կախված չէ, բայց միշտ մեր կամքից ու գիտակցականության աստիճանից է կախված լինել-չլինելու խնդիրը:

Ներկա վարչակարգի ուղղագիծ, առանց ինքնուրույն դրսեւորումների, ԱՄՆ-ին հետեւելն իրադարձությունների զարգացումը տանելու են վաղարագույն ճանապարհով՝ բռնատիրություն, երկրի միակողմանի ռազմականացում, ինքնուրույն մտքի ոչնչացում, նեղ ազգայնականության ագրեսիվ, դրանով իսկ անչափ ոլարզունակ հիմքի վրա կառուցված ոլետականություն, սոցիալական եւ հոգեբարոյական ծանր իրավիճակով հանդերձ: Անժամանակյա աջակցությունն ու դրանով ոլայմանավորված հաջողությունները ոչ մի իրական երաշխիք չեն ստեղծելու ոլետականության եւ ժողովրդի հարատեւման համար: Նշված ճանապարհով երկիրը տանելու հավակնորդներն արդեն իսկ բացահայտ արտահայտվում են աղագայի ծրագրերի մասին: Մենք կամ չենք նկատում, կամ չենք ուզում նկատել ակնհայտը եւ, հավանաբար, հերքական անգամ ուշքի կգանք միայն վերջին ոլահին, երբ ոլատմության հարվածը կանխել այլեւս հնարավոր չի լինի: ■

«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է
Apple Macintosh
համակարգիչների տեխնիկական որակյալ սպասարկում:

Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաեւ



- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես. համակարգչային ձեւավորման ոլատվերներ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն. Երեւան, Հանրապետության 47. «Ազգ» թերթ. ☎ 58-1841, 56-2863

digitised by A.R.A.R.@

«Միջազգային ներումը» եւ մարդու իրավունքները

Ինչպես նշված է «Amnesty international» («Միջազգային ներում») կազմակերպության այս տարվա զեկուցագրում, անիծյալ ձերբակալությունները, խոշտանգումները եւ սպանությունները դեռեւս մոլեգնում են աշխարհի 142 երկրներում:

Մարդու իրավունքների պաշտպանության «Միջազգային ներում» («Amnesty international») կազմակերպությունը 1961 թվականի մայիսի 28-ին հիմնել են բրիտանացի փաստաբաններ Պիտեր Բենենսոնը եւ իռլանդացի իրավաբան Սին Մըքբրայդը: Այդ համաշխարհային անկախ կազմակերպությունը խորհրդակցական կարգավիճակ ունի ՄԱԿ-ում, ՅՈՒՆԵՍԿՕ-ում եւ Եւրախորհրդարանում: Վարչությունը բաղկացած է նախագահից, ինն անդամից կազմված գործադիր կոմիտեից, գլխավոր քարտուղարից: Կազմակերպությունը 1100 հազար անդամ եւ նվիրատու ունի 150 երկրներում, բաժանմունքներ՝ 48 երկրներում: Բյուջեն այս տարի կազմում է 13 միլիոն դոլար: Նպատակներն են՝

ա) խղճի կալանավորների, այսինքն՝ այն անձանց ազատագրումը, որոնք բանտարկվել են լոկ իրենց կարծիքի, ազգային պատկանելության, սեռի, մաշկի գույնի կամ լեզվի պատճառով, եւ որոնք բռնության չեն դիմել ու դրան կոչ չեն արել

բ) բոլոր քաղբանտարկյալների օրինական դատավարությունն արդարացված ժամկետներում

գ) մահապատժի, խոշտանգումների, բանտարկյալների հանդեպ դաժանության մյուս դրսեւորումների վերացումը

դ) անօրինական մահապատիժների եւ «անհետացումների» վերացումը:

Կազմակերպությունը դեմ է նաեւ պատանդ վերցնելուն, ոչ պետական կառույցների կողմից բանտարկյալների խոշտանգումներին եւ կամայական սպանություններին:

Գործունեության հիմնական մեթոդներն են հովանավորումը եւ շտաղ գործողությունները: Կազմակերպության խմբերից յուրաքանչյուրը կարող է իր հովանավորության տակ առնել մեկ կամ մի քանի խղճի կալանավորի, որոնց դատը պաշտպանում է մինչեւ նրանց ազատագրումը: Շտաղ գործողություններն իրականացնում են 65 երկրներում գտնվող 50 հազար կամավորները, որոնք իրավապաշտպանական արշավներ են կազմակերպում էլեկտրոնային փոստի, ֆաքսի, լուսահեռագրի միջոցով եւ կարող են հազարավոր նամակներ հղել շահագրգիռ երկրների իշխանություններին:

Կազմակերպությունը խմբեր է գործուղում դեպքերի վայրեր, մասնակցում է դատավարություններին եւ վկայություններ տալիս, հրապարակում զեկուցագրեր, հանրագրերի տակ ստորագրություններ հավաքում, գործում միջազգային հասարակություններում: Ինչպես նշում է ֆրանսիական «L'Express» շաբաթահանդեսը (1.10.92), իր գործունեության 30 տարում «Միջազգային ներում»ը ճնշել է 42 հազար դեպք: 38 հազար գործ այսօր ավարտված է: Նշենք որոշ տվյալներ: 1961 թվականին կազմակերպությունը իր հովանավորության տակ առավ երեք բանտարկյալների՝ ԽՍՀՄ-ում, Իսպանիայում եւ ԱՄՆ-ում: Նրանց թիվը հասավ 20 հազարի, որոնցից 520-ն ազատ արձակվեցին: 1972 թ. համաշխարհային արշավ սկսեց խոշտանգումների դեմ: Մեղադրվեց 60 երկիր: 1977 թվականը հայտարարվեց քաղբանտարկյալների տարի: Մեկ միլիոն ստորագրությամբ հանձնագիր հանձնվեց ՄԱԿ-ին: 1979 թ. դատարարվեց ԽՍՀՄ-ի պատժիչ համակարգը: 1983 թ. զեկուցագիր կազմվեց քաղաքական սպանությունների վերաբերյալ: Խղճի կալանավորների համընդհանուր ներման հանձնագիրը 1.5 միլիոն ստորագրությամբ հանձնվեց ՄԱԿ-ին: 1988 թ. ՄԱԿ-ը հավանություն տվեց բանտարկյալների պաշտպանության ընդհանուր սկզբունքներին: 1990 թ. յոթ երկրներ վերացրին մահապատիժը: Հիշյալ եւ բազմաթիվ ուրիշ ձեռնարկումների համար «Միջազգային ներում»ը 1977 թ. արժանացավ խաղաղության Նոբելյան մրցանակի, իսկ 1979 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների մրցանակի:

Այդուհանդերձ, մարդու իրավունքների ներկա վիճակը աշխարհում հեռու է բավարար լինելուց: Ըստ «Միջազգային ներման» 1992 թ. զեկուցագրի, ներկայումս ամերիկայում: Նրանց թիվը հասավ 20 հազարի, որոնցից 520-ն ազատ արձակվեցին: 1972 թ. համաշխարհային արշավ սկսեց խոշտանգումների դեմ: Մեղադրվեց 60 երկիր: 1977 թվականը հայտարարվեց քաղբանտարկյալների տարի: Մեկ միլիոն ստորագրությամբ հանձնագիր հանձնվեց ՄԱԿ-ին: 1979 թ. դատարարվեց ԽՍՀՄ-ի պատժիչ համակարգը: 1983 թ. զեկուցագիր կազմվեց քաղաքական սպանությունների վերաբերյալ: Խղճի կալանավորների համընդհանուր ներման հանձնագիրը 1.5 միլիոն ստորագրությամբ հանձնվեց ՄԱԿ-ին:

Ռուսաստան-Իրան գործակցությունը շարունակվում է

Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակը սեպտեմբերի 30-ին հայտարարել է, որ Ռուսաստանը կշարունակի իր ռազմական համագործակցությունը Իրանի հետ, այդ թվում նաեւ ծովուժի ասպարեզում: Ս. Յասսրժեմբսկին մամուլի ասուլիսում հայտնել է, որ Ռուսաստանն այժմ կատարում է նախկին ԽՍՀՄ եւ Իրանի միջեւ կնքված պայմանագրերը: Նա ավելացրեց. *«Ռուսաստանն աշխատում է ընդլայնել, ամրապնդել Իրանի եւ Ռուսաստանի միջեւ համագործակցությունը եւ բարիդրացիական փոխհարաբերությունները»*, ընդգծելով, որ Ռուսաստանը հավատարիմ է լոնդոնյան պայմանագրին, ըստ որի սովորական զենքի վաճառքը տվյալ շրջանի այն երկրներին, որոնք խախտում են շրջանի կայունությունը, արգելվում է: Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակը վկայակոչելով Ռուսաստանի արտգործնախարարի՝ այդ առիթով արտահայտած մտքերը Նյու Յորքում, նշել է. *«Մենք զենք վաճառելիս չենք անտեսում հավասարակշռության սկզբունքը, սակայն հաշվի առնելով երկրի տնտեսական դժվարին վիճակը, չենք կարող նաեւ հրաժարվել Իրանի հետ ռազմական համագործակցությունից: Իսկ ինչ վերաբերում է վաճառված զենքերի քանակին եւ որակին, դա վերաբերում է միայն Իրանին եւ Ռուսաստանին»*: Նա ի պատասխան Ամերիկայի արտգործնախարարի տեղակալի առարկություններին առ այն, որ զենքի վաճառքն այն երկրներին, որոնք պատկանում են ահաբեկչական երկրների թվին (Իրանը Ամերիկայի կողմից ահաբեկչական երկրների ցուցակում է դասվել), արգելվում է, ասել է. *«Մենք հարգում ենք այդ տեսակետը»*: ■

Թուրքիան անսպասելիորեն Իրանի կողքին

Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը «Ալ-Հայաթ» օրաթերթի թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ Աբու Մուսա կղզու հարցի կապակցությամբ հաստատելով Իրանի գերիշխանությունը վերոհիշյալ կղզու նկատմամբ, ընդգծել է. *«Դա նորություն չէ, այդ կղզին դեռեւս վաղ անցյալից Իրանի իշխանության տակ է եղել»*: Նա արաբական որոշ երկրների կողմից Իրանին ուղղված մեղադրանքները մերժելով՝ ավելացրել է. *«Իրանցիները չեն ցանկանում նոր դժվարություններ ստեղծել: Մենք երբեք նման քաղաքականություն չենք զգացել Իրանի կողմից»*: Թուրքիայի արտգործնախարարը շեշտել է. *«Իրանի արտաքին քաղաքականության մեջ մենք ծավալապաշտական նպատակներ չենք տեսնում եւ այդ տեսակետից ոչ մի մտահոգություն չունենք»*: Չեթինը «Ալ-Հայաթի» թղթակցի՝ Իրանի PKK-ի հավանական ռազմակայանների մասին հարցին պատասխանելով, ասել է. *«Մենք երբեք չենք ասել, որ Իրանում այդպիսի բազաներ կան, այլ ասում ենք, որ ահաբեկիչներն առանց Իրանի կառավարության իմացության իրանական տարածքը օգտագործում են իրենց գործունեության համար, քանի որ Իրանում կան բարձրադիր լեռներ եւ անդնդախոր ձորեր»*: Նա ավելացրեց. *«Դամենայն դեպս, Իրանի հետ համաձայնություն է ձեռք բերվել, որ Իրանն այլեւս թույլ չի տա, որպեսզի իր երկրի տարածքից Թուրքիայի դեմ բռնամական գործողություններ ձեռնարկվեն»*: ■

Առեւտուր փոստով

Դոլլարի ցածր կուրսը համաշխարհային մյուս արժույթների նկատմամբ պատճառ է հանդիսացել, որ շատ ադրանքներ Միացյալ Նահանգներում զգալիորեն էժան լինեն, քան Եվրոպայում: Դրանք գնելու համար պարտադիր չէ մեկնել օվկիանոսից այն կողմ, բավական է օգտվել ծովրոցային առաքումների ֆիրմաների ծառայությունից, եւ պատվերն արագ ստանալ փոստով: ■

Կարիքը մերձեցնում է հակադիր կողմերին

Հոկտեմբերի 11-ին Դամասկոսում Սիրիայի, Եգիպտոսի, Իրանի, Հորդանանի եւ Թուրքիայի էներգիայի եւ էլեկտրականության նախարարներն ստորագրեցին մի համաձայնագիր՝ հինգ երկրների էլեկտրացանցերի միակցման մասին: Այս հանդիպմանը մասնակցում էին նաեւ տնտեսական եւ սոցիալական զարգացման արաբական հիմնադրամի գլխավոր տնօրեն Աբդուլ-Լաթիֆ Ալ-Համադը եւ իսլամական զարգացման ֆոնդի մի ներկայացուցիչ: Համաժողովում հաստատվեցին այն հիմնական ու գլխավոր կետերը, որոնց հիման վրա այս ծրագիրը կիրագործվի ամենակարճ ժամկետում: Սիրիայի էլեկտրաէներգիայի նախարար Քամել Ալ-Բաբան հայտնեց, որ *«եթե այս ծրագիրը հաջողությամբ պսակվի, ապա Սիրիան կմիացվի այլ երկրների եւ հատկապես Ծոցի երկրների էլեկտրացանցերի հետ: Այն Թուրքիայի միջոցով կկապվի նաեւ եվրոպական երկրների հետ, իսկ Եգիպտոսի միջոցով՝ արաբական Մաղրեբի երկրների հետ»*: Նախարար Ալ-Բաբան նշեց, թե *«այս կենսունակ ու կարեւոր ծրագիրը մասնակից երկրների միջեւ կմեծացնի համագործակցության մակարդակը, որը կընդգրկի նաեւ այլ բնագավառներ»*: Դոկտոր Աբդուլ-Լաթիֆ Ալ-Համադը հավաստիացրեց, թե իր ղեկավարած եւ իսլամական զարգացման հիմնադրամներն ստանձնել են ծրագրի ֆինանսավորման պարտավորությունը: Այս ծրագրի առաջին փուլում կմիացվեն Եգիպտոսն ու Հորդանանը եւ Դամասկոսն ու Ամմանը, ապա դրանց կհաջորդեն Սիրիայի հյուսիսային շրջանները մինչեւ Թուրքիա: Այս փուլը կտեւի 3-4 տարի, որի ծախսերը, ըստ նախնական հաշվարկների, կկազմեն 3-4 միլիարդ դոլար, որը կբաշխվի վերոհիշյալ երկու հաստատությունների մասնակից երկրների վրա՝ երկարաժամկետ վարկերով եւ խորհրդանշական տոկոսներով: Մյուս կողմից, Սիրիայի եւ Թուրքիայի միջեւ կայացվել է մի համաձայնություն, ըստ որի միմյանց կկապվեն երկու երկրների էլեկտրացանցերը: Այս կապակցությամբ ստեղծվել է տեխնիկական մի հանձնախումբ, որը կուսումնասիրի ծրագրի ծախսերն ու նրա տնտեսական արդյունավետությունը: Ինչպես հայտնի է, նախկինում Սիրիայի նախաձեռնությամբ կատարվել են էլեկտրամիացումներ հարեւան երկրների հետ, որոնցից առաջինը՝ 1972 թ. Լիբանանի, ապա՝ 1977 թ. Հորդանանի հետ: ■

Լատվիա. Զորքերի դուրս բերումը ոչ մի պայման չպետք է խոչընդոտի

«Ռուսաստանը բերեւս պետք է իր տարածքում լատիշներին այնքան իրավունքներ առաջարկի, որքան մեզ մոտ ունեն ռուսները», այդպես մեկնաբանեց Լատվիայի խորհրդարանի պատգամավոր Ինդուլիս Բեռզինշը Բորիս Ելցինի հայտարարությունն այն մասին, թե Լատվիայից եւ Էստոնիայից զորքերի դուրս բերումը ուղիղ համեմատական է այդ երկրների օրենսդրության՝ միջազգային նորմերի համապատասխանությանը: ԼՀ-ի իշխանությունները գտնում են, թե հանրապետությունում մարդու իրավունքների ոչ մի խախտում չկա, եւ պնդում են, որ զորքերի դուրս բերումը չպետք է կախված լինի այլ հարցերից: ■

digitised by A.R.A.R.@

Մնաս բարով, Ֆիդել, դու դարձար բռնատեր

Ժորժ Ամադուն խզում է հարաբերությունները Կաստրոյի հետ

Բրազիլացի ականավոր գրողը, որը համարվում էր կուբայական վարչակարգի ամենահավատարիմ կողմնակիցներից մեկը, հրաժարվեց իր նախկին համոզմունքներից:

«Կուբայում կաստրոյական հեղափոխությունը, հայտարարեց նա մեքսիկական «Պրոսեսո» շաբաթաթերթին տված հարցազրույցում, *վերածվեց բռնատեսության: Երկրում այսօր բացարձակապես բացակայում են քաղաքական ազատությունները»:*

Այսօր արդեն քչերն են հիշում, որ դեռ 1962 թվականին Կուբա իր առաջին այցելությունից հետո Ամադուն ասում էր, թե ինքը *«որոշ հիասթափություն»* զգաց: *«Ես հավատում էի ժողովրդավարական առաջային, որովհետև, որպես լատինաամերիկացի եւ գրող, խղճով չէի կարող բացառել կուբայական հեղափոխության ձեռքբերումները եւ վնասները,* բացատրեց նա: *Սակայն ազատությունը մարդու համար նույնքան անհրաժեշտ է, ինչպես հացը»:*

60-ական թվականների սկզբից Ժորժ Ամադուն մայրցամաքի այլ ականավոր գրողների՝ Կառլոս Ֆուենտեսի, Վարգաս Հյոսի, Գարսիա Մարկեսի հետ ակտիվորեն աշխատակցում էր Կուբայում լույս տեսնող «Կասա դե լաս Ամերիկաս» գրական ամսագրին: Դա լատինաամերիկյան գրականության ծաղկման բուռն ժամանակաշրջանն էր: Կուբայի մշակութային հաղթականությունը այն տարիներին սացավ մայրցամաքային բափ: Իսկ կաստրիզմը դարձավ գաղափարական խորհրդանիշ, որը միավորեց տարբեր վիդասանների ձգտումները, զինելով նրանց գաղափարական կողմնորոշիչներով եւ իրենց մշակութային ընդհանրության գիտակցությամբ: Սակայն տարիներով այդ միասնությունը սկսեց քայքայվել: Հատկապես կղզում ժողովրդավարական ազատությունների բացակայությունը պատճառ դարձավ Կաստրոյից հեռանալու՝ մի դեպքում ակնհայտորեն, մյուսում ասիճանաբար: Կուբայական վարչակարգի խստորեն դատապարտումը Ժորժ Ամադուի կողմից նշանակում է, որ Ֆիդելը ի դեմս նրան կորցրեց իր հենարանը լատինաամերիկյան մտավորականության շրջանում:

«Ամեն գրող պետք է պայքարի սոցիալիզմի եւ ազատության զուգակցման համար, վերջերս հայտարարեց Ամադուն իտալական «Ստամպա» թերթին տված հարցազրույցում, *որովհետև, երբ փորձում են սոցիալիզմը կառուցել ինչ-որ գաղափարների հիման վրա, նա անխուսափելիորեն վերածվում է բռնատեսության: Ընդ որում, ձախ բռնատեսություններն ավելի վատ են, քան աջերը. վերջիններիս դեմ գոնե կարելի է կռվել բացեիբաց»:*

Ամադուի կարծիքով, կաստրիզմի անկումը կանխորոշված էր ԽՍՀՄ-ի հետ դաշինքով, որը Հավանային ստիպեց գնել խորհրդային աջակցությունը *«գաղափարախոսության գնով»: «Ես հակակոմունիստ չեմ,* իր միտքը բացատրում է Ժորժ Ամադուն, *ուղղակի կոմունիզմը դադարեց իր մեջ մարմնավորել ժողովրդավարական սոցիալիզմը: Իսկ ես շարունակում եմ հավատալ սոցիալական արդարությանը»:* Գրողը համոզված է, որ *«Կաստրոն պետք է դեմքով շրջվի դեպի ժողովրդավարական հեղափոխությունը»: «Սոցիալիզմը,* գտնում է գրողը, *մարդկությանը կարող է առաջ տանել, սակայն դրա համար նա պետք է գործակցի ժողովրդավարության հետ, հակառակ դեպքում այն դառնում է խաբեություն, ինչպես այն, որի հետ ընդհարվեց Ռուսաստանը, երբ ավարտվեց հեղափոխությանն առաջին՝ հերոսական եւ հիանալի ժամանակաշրջանը»:* ■

«Պամյաս»ի ակտիվիստները ներխուժել են «Մոսկովսկի կոմսոմոլեց»ի խմբագրություն

Երեքշաբթի օրը ժամը 11:20-ին «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթի խմբագրություն ներխուժեցին զինված զինանշաններ կրող սեւ համազգեստով մոտ 25 մարդ: Նրանցից 15-ը մտան այն սենյակը, որտեղ այդ ժամանակ խորհրդակցություն էր, եւ ներկայացան որպես ժողովրդա-հայրենասիրական «Պամյաս» ճակատի անդամներ: Նրանք վերջնագիր ներկայացրեցին, պահանջելով անմիջապես բացել «Պամյաս»ի մասին հոդված գրողների ծածկանունները եւ *«վերջ տալ ռուս ժողովրդին սպառնալուն»:*

Վերջնագրում սպառնալիք կար, եթե երեք օրվա ընթացքում չկատարվեն նրանց բոլոր պահանջները, *«խոսակցությունը այլ կերպ կշարունակվի»:* Դրանից հետո, ինչպես «ԻՏԱ»ի թղթակցին հայտնեց իրադարձությանը ներկաներից մեկը, սենյակում եղած բոլոր անձինք ենթարկվեցին ֆոտո եւ կինո ժապավենի վրա: Միլիցիան եկավ կանչից 35-40 րոպե անց, երբ «Պամյաս»ի ներկայացուցիչները արդեն 20 րոպե էր, ինչ լքել էին խմբագրությունը: Սակայն խմբագրության աշխատողներին հաջողվել է նշել չորս մեքենաների համարները, որոնցով «ժամանել էին» հարձակվողները, եւ նկարել մի քանի մարդու:

Այս գործողության պատասխանատվությունը «Պամյաս»ը վերագրեց իր վրա: Ինչպես «ԻՏԱ»ին հայտնեց ճակատի առաջնորդ Դմիտրի Վասիլեւի համհարզ Ալեքսանդր Պոտկինը, դրա առիթ էր հանդիսացել այն, որ երգիչ եւ կոմպոզիտոր Իգոր Տալկովի մահվան տարեդարձի կապակցությամբ թերթը մի հոդված էր տպագրել, որում նշված փաստերը *«լկտի սուտ են եւ ծաղրանք»:*

Պոտկինը հաստատել է, որ եթե եռօրյա ժամկետում խմբագրությունը պաշտոնապես ներողություն չխնդրի, «Պամյաս»ը կդիմի *«ավելի գործնական քայլերի»:* Սակայն նա հերքել է լուրերն այն մասին, որ գործողության ընթացքում պահակներն իբր թե կապկոծվել են, եւ նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ է գործադրվել: Պոտկինը հայտնեց, որ ճակատը իր տրամադրության տակ ունի այդ գործողության ամբողջ տեսաժապավենը եւ պատրաստ է այն ցուցադրել:

«Մայրաքաղաքի կառավարությունը բավականաչափ ուժեր ունի ծայրահեղականներին կանխելու համար եւ ամեն ինչ կանի պաշտպանելու ժողովրդավարությունն ու անկախ մամուլը», այդ կապակցությամբ հայտարարել է Մոսկվայի քաղաքապետարանը:

Երեկ Մոսկվայի դատախազությունը դեպքի առթիվ քրեական գործ է հարուցել: ■

Ուզբեկստանն ու Աֆղանստանը դիվանագիտական հարաբերություններ են հաստատում

Ուզբեկստանի եւ Աֆղանստանի ղեկավարներ Իսլամ Քարիմովը եւ Բուրհանիդդին Ռաբբանին երեքշաբթի օրը Տաշքենդում ստորագրեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ակտ: Արարողությունից հետո կայացած մամուլի ասուլիսում Քարիմովը հայտարարեց. *«Մեզ պլանն է հարեւաններ ուղարկում, եւ մեր պարտքն է բարեկամություն անել նրանց հետ»:* Իր կողմից Ռաբբանին ասաց, թե *«այսօր հարեւան ժողովուրդների պատմության լուսավոր օրն է»:*

Պատասխանելով «ԻՏԱ»ի թղթակցի հարցին, նախագահ Քարիմովը հույս հայտնեց, թե Ուզբեկստանի օրինակին կհետեւեն նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունները, առաջին հերթին Միջին Ասիայի երկրները: Նա նշեց, թե Աֆղանստանի ճակատագրի համար պատասխանատվություն է կրում ամբողջ համաշխարհային ընկերակցությունը: Նրա խոսքերով, *«առանց միջազգային օգնության Աֆղանստանի համար դժվար կլինի բուժել վերքերը, ոչ դնել զարգացման ուղի»:* Քարիմովը կոչ արեց այդ հարցը քննարկել ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում:

Ռաբբանին համաձայնեց շրջանի երկրների համագործակցության վերաբերյալ Քարիմովի նախաձեռնությանը: Նա հավանություն տվեց ավտոմայրուղի կառուցելու գաղափարին, որը Տաշքենդը Աֆղանստանի վրայով կմիացնի Պակիստանի Կարաչի նավահանգստին: ■

Պակիստանը Սիրիայից պահանջում է իր նախկին վարչապետի որդուն

Հոկտեմբերի 13-ին Պակիստանը պաշտոնապես Սիրիայից պահանջեց իրեն հանձնել հանգուցյալ վարչապետ Զուլֆիկար Ալի Բհուտոյի որդի Մուրթաղա Բհուտոյին, որը տասը տարուց ի վեր բնակվում է Դամասկոսում եւ ղեկավարում է «Ալ Զուլֆիկար» կազմակերպությունը: Ըստ Մոնտե Կառլո ռադիոկայանի, կազմակերպությունը Պակիստանում կատարում է քայքայիչ գործողություններ: Այս կապակցությամբ հոկտեմբերի 13-ին Պակիստանի արտգործնախարարությունը Սիրիայի հավատարմատարին պաշտոնական պահանջագիր հանձնեց: Սեպտեմբերի կեսերին Մուրթաղա Բհուտոն պակիստանյան թերթերից մեկին հարցազրույց տալով, դարձյալ համաձայն նույն ռադիոկայանի, առաջին անգամ խոստովանել է, թե ինքը ստանձնում է 1981 թ-ին պակիստանյան օդանավի առեւանգման պատասխանատվությունը, ինչպես նաեւ անցյալ տարիների ընթացքում տեղի ունեցած մի շարք քաղաքական սպանությունների ու քայքայիչ գործողությունների կատարումը: Մ. Բհուտոն նույն հարցազրույցում նշել է, թե Սիրիայի նախագահ Ասադը իրեն վերաբերվում է այնպես, ինչպես իր ընտանիքի զավակներից մեկին:

Պակիստանյան կառավարության այս քայլը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ հոկտեմբերի 13-ին ընդդիմության ղեկավար Մուրթաղայի քույրը՝ Բենազիր Բհուտոն, կոչ արեց ընդդիմության արտաքին կազմակերպել վարչապետ Նաուազ Շարիֆի կառավարությունը տապալելու նպատակով: ■

Ոստե՞ղ է լրագրողներից թաքնվում Ստալինի դուստրը

«ԼԳ»-ի Լոնդոնի թղթակից Միխայիլ Օգերովը հետաքննություն է անցկացրել եւ պարզել, որ իրոք մինչեւ վերջին ժամանակներս Սվետլանա Ալիլուեւան աղրել է անօթեւանների «Քար-Հոմ» ապաստանում եւ ունեցել է ֆինանսական դժվարություններ: Նրա նախկին հարեւանուհին՝ երիտասարդ նեգրուհին, հիշում է, որ Լանա Պետերսը (այսօր այդպես են անվանում Ստալինի դստերը) բողոքել է, թե ինքը դժվարանում է մուծել շաբաթական 78 ֆունտ՝ ապաստանի սենյակի համար: Մեկ տարի առաջ ամուսնու մահից եւ դստեր՝ ամուսնու հետ Ամերիկա մեկնելուց հետո Ալիլուեւան մնացել է միայնակ: «Գիրք բոռնիկների համար»ում նա գրում է հնդկական փիլիսոփա Կրիշնամուրտիի մասին, որի լոնդոնյան դպրոցն է հաճախել ինքը: *«Նա ուզում էր, որ մենք հրաժարվենք մեր բոլոր գաղափարներից, քաղաքականությունից, աշխարհի բոլոր «իզմերից», ամեն մի կազմակերպված կրոնից, դարերով մշակված նորմերից»: «Այն ժամանակ, ասում էր նա, ձեր կյանքի կմտնի անճանաչելի, անիմանալի, ամբի պես ահռելի, սիրո պես տաք, եւ դուք կգնաք նրա հետեւից... Միայն այն ժամանակ դուք կհասկանաք, թե որքան գեղեցիկ է դա»:* Հնարավոր է հենց այստեղ է թաքնված այն գաղտնիքը, թե ինչու նա որոշեց դիմել «Քար Հոմ» կազմակերպությանը, որը զբաղվում է հոգեկան հիվանդներով եւ թմրամոլներով: ■

Ռուսաստանն ստիպված է օրինակ վերցնել ԱՄՆ-ից

ԱՄՆ-ի նախկին պաշտպանության նախարար Ջեյմս Շլեզինջերն անհրաժեշտ է համարում զգուշացնել Ռուսաստանի իշխանություններին անհանգիստ ինքնավարություններում շտապողական ուժային ճնշում գործադրելուց: «ԼԳ»-ի եւ Կարնեգիի հիմնադրամի ռուսական եւ եվրասիական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած «կլոր սեղանին» նա հայտարարեց, թե ռազմական ուժի ցանկացած կիրառում կառաջացնի ամերիկյան հասարակայնության եւ կոնգրեսի անդամների բացասական տրամադրվածություն: ԱՄՆ-ի վարչակազմը կսկսի ավելի զգույշ քաղաքականություն վարել Ռուսաստանի նկատմամբ եւ կհետազոտի՝ արդյոք անհրաժեշտություն կա՞ր այդպիսի միջոցների դիմելու: Եթե իրոք ուժային ճնշման կարիք է եղել, նա կդատապարտի Ռուսաստանի հետ իր կապերն ու հարաբերությունները: ■

Կովկասում իրավիճակը բարդանում է

«Ռուսաստանի ձայն» ռադիոկայանը, անդրադառնալով Հյուսիսային Կովկասում ազգամիջյան եւ քաղաքական բարդ իրավիճակին, նշում է, թե օրեցօր սրվում են փոխհարաբերությունները շրջանի կազակների եւ կովկասյան ժողովուրդների միջեւ: Միջադեպերից մեկի հետեւանքով զոհվել է Հյուսիսային Օսիայի մեկ քաղաքացի, որի համար վրեժխնդիր լինելու մեկնող երեք ինքնաշարժերը կանգնեցվել են ոստիկանության կողմից: Ռադիոն ավելացնում է, թե վերջին ժամանակներս հաճախակի են դարձել հրազենի եւ զինվորական տեխնիկայի հասցեագումները կազակներին:

Օգնություն Եգիպտոսին

RFI ռադիոկայանը հաղորդում է, թե Եվրոպայի տնտեսական ընկերակցությունը աղետի հետեւանքները վերացնելու նպատակով Եգիպտոսին է տրամադրել 150 մլն. էկյու: Ֆրանսիայի կառավարությունը նույն նպատակներով հատկացրել է 300 հազար ֆրանկ եւ երկիր է առաքել բժիշկներ, փրկարարներ եւ այլ մասնագետներ:

Թռիչք աշխարհի շուրջը 33 ժամ 55 րոպեում

Կոլումբոսի կողմից Ամերիկայի հայտնաբերման 500-ամյակին նվիրված ֆրանսիական «Կոնկորդ» ինքնաթիռի անվայրէջք թռիչքն աշխարհի շուրջ տեւել է 33 ժամ 55 րոպե: Թռիչքը կատարվել է Լիսաբոնից, իսկ ուղեվճարը կազմել է 24000 դոլար:

Դանիան կրկին անդրադառնում է Մաաստրիխտին

Դանիայի կառավարությունը հանդես է եկել հայտարարությամբ, ուր ասվում է, թե անհրաժեշտ են նոր բանակցություններ Մաաստրիխտի համաձայնությունների շուրջ, եւ Դանիան կրկին պետք է անդրադառնա դրանց վավերացման հարցին:

Ռուսական նավերը Աբխազիայի ափերի մոտ

BBC ռադիոկայանը հաղորդել է, որ Ռուսաստանը 9 ռազմական նավ է ուղարկել Աբխազիայի ափերի մոտ, որոնք, ըստ ռուսական կողմի, պետք է հսկեին ակնկալվող բանակցությունները Ելցինի, Արծինբայի եւ Շեւարդնաձեի միջեւ (բանակցությունները հետաձգվել են): Ուկրաինան եւ Վրաստանը խիստ քննադատության են ենթարկել ռուսական նախաձեռնությունը: Պաշտոնական Կիեւը դա գնահատել է որպես սեւծովյան նավատորմի հարցում ձեռք բերված Յալթայի համաձայնությունների խախտում:

Գերմանիան խստացնելու է գաղթականության ընդունման օրենքները

Գերմանիայի երեք առավել ազդեցիկ կուսակցությունները համաձայնություն են ձեռք բերել ներգաղթի օրենքները խստացնելու հարցում, հայտնում է RFI կայանը: Ներկայումս տարեկան Գերմանիա է ներգաղթում շուրջ 50 000 մարդ:

Ընդհարումներ Կոսովոյում

BBC ռադիոկայանը հաղորդում է, որ Կոսովոյի վարչական կենտրոն Պրիշտինայում տեղի են ունեցել ընդհարումներ ալբանացի ուսանողների եւ հարավսլավական ոստիկանության միջեւ:

digitised by A.R.A.R.@

Ալոնի. Գոլանի բարձունքը սիրիական տարածք է

Իսրայելի կրթության նախարար Շոլամիս Ալոնին խոսովանեց, թե «համաձայն միջազգային օրենքի, Գոլանի բարձունքը սիրիական հողերի մի մասն է, եւ Սիրիան իրավասու է այն ամբողջությամբ պահանջել»: Այս հայտարարության մեջ, իսրայելցի նախարարը նշեց նաեւ, թե «իսրայելյան նախորդ կառավարությունները սխալ գործեցին, երբ բաջալերեցին Գոլանի բարձունքում հրեական բնակավայրերի կառուցումը»:

Տնտեսական համագործակցության խորհրդաժողով Ստամբուլում

BBC կայանի թղթակիցը Ստամբուլից հաղորդեց, որ այնտեղ գումարվել է խորդաժողով Թուրքիայի եւ նախկին ԽՍՀՄ թուրքական հանրապետությունների մասնակցությամբ: Բացի նշված երկրներից, մասնակցել են Արեւմուտքի շահագրգիռ կազմակերպություններն ու ֆիրմաները: Իր ողջույնի ելույթում Թուրքիայի վարչապետ Դեմիրելը մեկ անգամ եւս ընդգծել է թուրքական մոդելի կարեւորությունը նորաստեղծ պետությունների համար, իսկ Արեւմուտքին նախազգուշացրել է Միջին Ասիայում եւ Ադրբեջանում իսլամական արմատականության տարածման վտանգի կապակցությամբ:

Ալժիրը բոլոր ալժիրցիների համար

Ալժիրի պետական բարձրագույն խորհրդի նախագահ Ալի Քաֆին հայտնեց, թե իր երկիրը վճռել է «արմատախիլ անել ուժային մեթոդները, ահաբեկչությունը, կրոնի շահագործումը եւ հասվածական վիճաբանությունները քաղաքական արարքներում, հանուն ժողովրդական համակարգի կառուցման, որը կոչաշտանի մարդու իրավունքները եւ հնարավորություն կտա ժամանակակից եւ ուժեղ պետության հիմքերը ամրապնդելու ըստ հանրապետական համակարգի»: Նա իր ժողովրդին ուղղած ճառում ասաց, թե «Ալժիրը կլինի բոլոր ալժիրցիների համար եւ ոչ թե որոշ կուսակցությունների կամ ցեղերի մի բուռ շահատերերի պետություն»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակը արաբական ինստիտուտին

ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտարարեց, թե որոշել է իր 1992 թ. մրցանակը շնորհել Թունիսի մարդու իրավունքների արաբական ինստիտուտին, որը իրավունք է դասավանդում: ՅՈՒՆԵՍԿՕ-ն հաղորդեց, թե մրցանակների բաշխմամբ զբաղվող հանձնախումբը այս մրցանակի համար ընտրել է մարդու իրավունքների արաբական ինստիտուտը որպես գնահատանք նրա ջանքերին, մարդու իրավունքի պաշտպանության ասպարեզում դասատուներ, փաստաբաններ, ոստիկաններ եւ բանտային աշխատողներ պատրաստելու համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆրեդերիկո Մայորը նոյեմբերին վերոհիշյալ ինստիտուտի նախագահ Հասիբ Իբն Ամմարին կհանձնի մրցանակը, որի արժեքը կազմում է 10 հազար դոլլար:

Նոր մոլորակ Արեգակնային համակարգում

BBC կայանը հաղորդեց, թե օգոստոսի 30-ին Հավայան կղզիներում 4000 մետր բարձրության վրա տեղակայված աստղադիտարանի աշխատակիցները հայտնաբերել են նոր մոլորակ, թվով տասներորդն Արեգակնային համակարգում, որի փաստը վերջին օրերս հաստատվել է նաեւ այլ աստղադիտարանների կողմից: Նոր մոլորակն առաջինն էր, որ չի կոչվել հռոմեական աստվածներից մեկի անունով, այլ պարզապես «Սնայլի»:

Բրինդիզի. բրոնզե առեղծված

Իտալիայի հարավում մաֆիային առնչվող մի ճնշություն ավարտվել է հնագիտական հայտնագործությամբ

«15 մետր խորության վրա ես նկատեցի ավազից դուրս ցցված ոտք: Սկզբում կարծեցի, թե մարդու ոտք է: Քաշեցի: Դա բրոնզե ոտք էր»: Կարաբինիերների լեյտենանտ Ռոբերտո Ռոբուստան Իտալիայի հարավ էր եկել մաֆիային առնչվող ճնշություն անցկացնելու, սակայն, ջրում սուզվելով, Բրինդիզի քաղաքի ափերի մոտ պատահաբար հայտնաբերել էր հնագիտական գանձ՝ ոտք, գլուխ, կիսանդրիներ, ձեռքեր, խեցեղեն... Այդ հրաշալի գտածոների «որսը» շարունակվում է օգոստոսի սկզբներից: *«Ծովի հատակը պատված է բրոնզով*, պատմում է նա: *Մենք սուզվեցինք մեծաղոտսիչ սարքով, որն արձագանքում էր խելահեղ կերպով»*:

Արդեն դուրս են բերվել շուրջ 400 փորք ու միջակ բեկորներ եւ մոտ քսան մեծ կտորներ: Դրանց մի մասի որակը բացառիկ է: Կան մ.թ.ա. 4-րդ դարի հույն փիլիսոփաների բազմաթիվ դիմանկարներ, մասնավորապես՝ մորուքավոր գեղեցիկ տղամարդու քանդակ, որի ոճը բավական մոտ է հանրահայտ «Ռիաչեի բրոնզների» ոճին, հավանաբար հաղթանակի աստվածուհու արձանից պոկված բրոնզե թեւ, ալիքավոր մազերով կնոջ դիմանկարներ եւ այլն: *«Պեղումների շնորհիվ պարզվեց տարբեր չափերի 3-4 արձանների գոյությունը (մեկի բարձրությունը մոտ 3 մետր է), որոնց պատկանում են մեր գտած որոշ բեկորներ»*, պարզաբանում է Իտալիայի մշակութային ունեցվածքի նախարարության ստորջրյա հնագիտության ծառայությունների պատասխանատու, պրոֆեսոր Կլաուդիո Մոկկեջանին:

Բեկորները հայտնաբերվել են Բրինդիզի քաղաքից հյուսիս գտնվող Պունտա Պեննա հրվանդանից 300 մետր հեռավորության վրա, մոտավորապես 30 մետր լայնությամբ եւ 70 մետր երկարությամբ տարածքում: Գտածոներն ընդհանուր առմամբ կազմում են ստորջրյա զարմանալի առեղծված, վերջին տարիների ամենամեծ եւ հանելուկային հնագիտական հայտնագործություններից մեկը: Հանված վերջին գտածոներից մեկը՝ 180 սմ հասակով կնոջ բրոնզե արձանը, որի դեմքը քայքայված է, որոշ այլ արձանների հետ Ֆլորենցիա է փոխադրվել պահպանիչ մշակման համար: Մոտ հիսուն բեկորներ դեռ մնում են ծովի հատակում:

Գտածոների «բազմանալուն» եւ առավել ճիշտ թվագրվելուն զուգընթաց խորհրդավորության մշուշը կամաց-կամաց ցրվում է: Առկա են տարբեր վարկածներ: Առաջինն այն է, որ բրոնզե իրերը բեռնված են եղել Հունաստանից Իտալիա գնացող նավի վրա, որը խորտակվել է: Դա հնարավոր է, բայց ոչ համոզիչ, քանզի իրերի զգալի մասը հռոմեական է եւ ոչ թե հունական: Այս վարկածը հիմնվում է այն փաստի վրա, որ մ.թ.ա. 2-րդ դարում Հունաստանը նվաճելուց հետո հռոմեացիները դարեր շարունակ օգտվեցին նրա արվեստի հարստություններից՝ իրենց քաղաքներ եւ առանձնատները զարդարելու համար: Նավերը երթեւեկում էին Աթենքից Բրինդիզի, որտեղից բեռները Հռոմ էին հասցնում ցամաքային ուղիով:

Մյուս առեղծվածն այն է, որ արձանները եւ տարբեր բեկորները թվագրվում են մ.թ.ա. 4-րդ դարից մինչեւ մ.թ. 3-րդ դարը, այսինքն՝ գոյություն ունի մոտ յոթ դարի տարբերություն: Որոշ մասնագետներ նույնիսկ ենթադրել են, թե «գանձը» վերաբերում է հռոմեացի կոնսուլ Լուցիուս Մումիուսի կողմից մ.թ.ա. 146 թվականին հունական Կորնթոս քաղաքը կողոպտելու ժամանակներին: Մումիուսը կողոպտիչ մարդ էր եւ ասել էր, թե ձիերը *«կմիզեն Կորնթոսի բրոնզների վրա»*: Բայց նա բաջաբեղյակ էր իր ավարների արժեքին եւ հազիվ թե դրանք ջարդեր Իտալիա հասցնելուց առաջ: Այս վարկածի սնանկությունը հաստատվում է մանավանդ քրիստոնեական շրջանի իրերի առկայությամբ:

Մեկ ուրիշ վարկածի համաձայն, այդ բրոնզե իրերը եղել են ծովահենների ավարը, որոնց համար կարեւորություն է ունեցել միայն մետաղի քաշը: Սակայն արեւելյան սկահակների եւ խեցեղենի առկայությունը վկայում է, որ դա ավելի շուտ առեւտրանավի կամ բեռնատար նավի բեռ է:

Պրոֆեսոր Մոկկեջանիի կարծիքով, բրոնզե արձանները եղել են անհետաձգելիորեն հալվելիք մետաղ՝ նոր արձաններ, շքամուտքեր, զենքեր պատրաստելու համար: Դրանք դիտավորյալ ջարդել են փոխադրումը դյուրացնելու համար: Ջարդող մետաղագործը կարեւորություն չի տվել վերածվելիք իրերի գեղարվեստական արժեքին: Դա բավական տարածված երեւույթ է եղել հռոմեական կայսրության մայրամուտին եւ վաղ միջնադարում:

Ընթացիկ հետազոտությունները գուցե աղաղակ կերպով լուծեն առեղծվածը: Իսկ մինչ այդ հարկավոր է հնարավորին չափ արագ հավաքել առարկաները, կանխել սիրող հնագետների, ամեն կարգի ծովահենների եւ արվեստի իրեր վաճառողների հոսքը:

«Սակայն, ասում է իտալացի հնագետ պրոֆեսոր Ջուլիանո Վոլոնեն, *պետք է ավելի հետաքննել: Հավանաբար հատակի տիղմի մեջ առկա են բավական մեծ նավի բեկորներ, մնացուկներ: Հարկավոր է դրանք գտնել առավել լուրջ պեղումներ իրագործելու, գուցե նաեւ նավաբեկության ժամկետը պարզելու համար»*:

Իսկ առայժմ, մարն ընկնելուց հետո լեյտենանտ Ռոբուստան հուսկում է, որ գիշերային կողոպտիչները չգողանան իր գտած գանձը:

Ըստ «Le Point» հանդեսի
25 սեպտեմբեր

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Ո՞վ է Հարավսլավիայում շարժում շախմատային քարերը

Սարակազմ, 43-ամյա խորաթափանց եւ մի քիչ գողաբարո երկնագույն աչքերով Եգոր Վասիլեւիչը, որը կրում է ոսկյա ժամացույց եւ կոկորդիլոսի կաշվից կարված կոշիկներ, կարող է ծառայել որպես համառ ձեռնարկատերի օրինակ, որը ծաղկում է Արեւելյան Եւրոպայում կոմունիզմի փլատակների վրա: Մրցախաղի մասնակիցներին նա հաստատել է շախմատային մրցախաղերի համար անհախադեպ գումար՝ 5 միլիոն դոլլար եւ այս բոլորը նրա համար, որպեսզի 20 տարվա մենակությունից Բոբի Ֆիշերին բերի արեւոտ ծովափ, Բոսնիայի եւ Հերցեգովինայի մարտական գործողությունների հարեւանությամբ:

«Միայն պատկերացրեք, ասաց Վասիլեւիչը հարցազրույցում, *հոնորարի ճեղքը կազմում է 1.7 միլիոն դոլլար: Երբեք այդպիսի լարվածությամբ եւ մարությամբ շախմատ չեն խաղացել»*: Իր պեսի միտքը բացատրեց նրա օգնականներից մեկը՝ մրցախաղի տնօրեն Յանուշ Կուբաքը. *«Պարոն Վասիլեւիչը դրամին հավատացող մարդ է: Նա իրոք համարում է, որ դրամը կարող է ամեն ինչ անել»*:

Եթե այդ սկզբունքը արտացոլում է այսօրվա իրականությունը, ապա դա առաջին հերթին վերաբերում է Հարավսլավիային, ուր նրա գործունեությունը բուռն ծավալվում է: Թե ինչ դեր է խաղացել դրանում եւ շարունակում է խաղալ Վասիլեւիչը, մնում է վեճի առարկա: Մամուլը հայտնել էր նրա մասնակցության մասին այնպիսի գործողություններին, որոնք ընդգրկում են սերբական բանակում վարձկանների, Իսրայելում սպառազինությունների գնման, միջազգային արգելքների առկայությամբ նավթի ներմուծման բնագավառները: Մեկ այլ հաղորդման մեջ ենթադրվում էր, որ նա հանդես է գալիս որպես ֆինանսական ֆող Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչի համար:

Վասիլեւիչը բացառում է, որ դեր է խաղացել պատերազմի ֆինանսավորման գործում եւ հայտարարում է, որ երբեք չի հանդիպել Միլոշեւիչի հետ: Նա նաեւ հերքում է այն հաղորդումը, թե իբր անցյալ տարվա հոկտեմբերին Իսրայել այցի ժամանակ զենք է գնել եւ ավելացնում. *«Ես միայն աշխատում էի ձեզ բերել դեղորայք եւ հագուստ կարիքավորների համար, բոլորովին վերջերս Կարմիր խաչին նվիրեցի 500 հազար դոլլար պատերազմի զոհերին օգնելու նպատակով»*:

Ամեն օր Բելգրադում «Յուգոսլավիչ» դրամատան բաժանմունքի առջեւ հավաքվում են մեծ հերթեր: Վասիլեւիչն ասում է, որ ինքը իրեն կարող է թույլ տալ վճարել ավելի բարձր տոկոսային գումար, որովհետեւ բավարարվում է ավելի փոքր շահույթով, քան այլ դրամատներ:

Այնքան ազդայնամոլ էր Վասիլեւիչը, որ շախմատային մրցախաղն անվանեց *«էմբարգոյի դեմ բաց պատերազմ»*:

Բոբի Ֆիշերը, ինչպես հայտնի է, Մ. Նահանգների կողմից զգուշացվել է, որ իրեն սպառնում է խոշոր տուգանք կամ բանտարկություն այն բանին մասնակցելու համար, որը Հարավսլավիայում գնահատվում է որպես գործարար ակտիվություն:

«Նյու Յորք թայմզ»

ՀՀ բարձրագույն խմբի առաջնություն

Պայքարն ավելի է սրվում

Եզրափակիչ փուլ (13-24 տեղեր)
8-րդ տուր

«Արաքս»-«Նիգ» 2:1, «Շենգավիթ»-«Ալաշկերտ» 7:1, «Քասախ»-«Զորավան» 2:0, «Ազնավուր»-«Լոռի» 6:1, «Դեբեդ»-«Ախթամար» 1:0:

«Իմպուլս»-«Մալաթիա» կարեւոր հանդիպումը չկայացավ, քանի որ «Մալաթիան» չժամանեց Դիլիջան: «Շենգավիթ»ն ու «Քասախ»ը գործնականում լուծել են բարձրագույն խմբում մնալու հարցը: Իսկ ահա 3-րդ տեղի համար, որը նույնպես նման իրավունք է տալիս, ծայր աստիճան անհաշտ պայքար է ծավալվել «Զորավան»ի, «Իմպուլս»ի, «Մալաթիա»ի եւ «Ազնավուր»ի միջեւ (տես աղյուսակը):

Մրցաշարային աղյուսակը
նոյեմբերի 15-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
13. Շենգավիթ	18	13	3	2	44-17	29
14. Քասախ	18	13	2	3	49-18	28
15. Զորավան	18	9	3	6	38-25	21
16. Իմպուլս	17	9	3	5	35-27	21
17. Մալաթիա	17	8	5	4	40-26	21
18. Ազնավուր	18	8	5	5	31-21	21
19. Լոռի	18	8	1	9	36-43	17
20. Ախթամար	18	5	3	10	21-34	13
21. Նիգ	18	5	3	10	26-36	13
22. Արաքս	18	4	4	10	22-43	12
23. Դեբեդ	18	4	3	11	28-56	11
24. Ալաշկերտ	18	3	1	14	27-51	7

Պարտվեցին շահած դիրքերում

Թիլբուրգում անցկացվող շախմատային խոշոր մրցաշարում ասպարեզում մնացած երկու հայ գրոսմայստերներն էլ անհաջողության մատնվեցին: Ինչպես հայտնի է, 1/32 եզրափակիչում Հակոբյան-Դրեեւ եւ Լպուտյան-Սվեշնիկով մենամարտերի հիմնական ժամանակն առավելություն չէր տվել՝ կողմերից որեւէ մեկին (1:1): Լրացուցիչ պարտիաներում, երբ շախմատիստներին ամբողջ հանդիպման համար տրվում է միայն կեսական ժամ, երեւանցիները նախ ոչ-ոքի խաղացին: Ապա Հակոբյանը միանգամայն շահած դիրքում վրիպեց եւ ի վերջո սպառեց ժամանակը: Լպուտյանը եւս տանուլ տվեց հաղթանակ խոստացող դիրքը:

Այսպիսով, մրցաշարեզը բողեցին Հայաստանի բոլոր երեք ներկայացուցիչները (ավելի վաղ դուրս էր մնացել Վահանյանը): Պայքարն օլիմպիական մրցակարգով շարունակում են 32 շախմատիստներ:

Գ. Հ.

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Կայծկլտումներ

❖ Պահապան հրեշակս եւ ես ծիծաղում ենք իմ սխալների վրա. գուցե ա՞յդ է երջանկությունը:

❖ Հզոր անհատը ջարդվում է միայն այն դեպքում, երբ իր ուժը համարում է ինքնաբուխ:

❖ *Փողոցն անցնելու կանոն.* Նախ՝ հաշվի ես առնում կանաչ-դեղին-կարմիր ազդանշանները, հետո՝ թե արդյոք այն հաշվի առնո՞ւմ է քեզ հետ խաչաձեւվող անցորդը կամ մեքենան:

❖ Ամեն մեկը սեփական վարքագծով իրեն պատասխանատու պետք է համարի երկրագնդի ճակատագրի համար:

❖ Օդին խմելուց հետո ենք վատ զգում, կոնյակը՝ այն գնելու պահին:

❖ *Հակառաջադեմ.* Իմաստությունը ծախորդությո՞ւն է, եթե նկատի ունենանք, որ «ծախորդության նշան են սղիտակ մազերը»:

Կայծքարի պատասխանատու՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՀ Ֆուտբոլի հավաքականի անդրանիկ ելույթը

Հայաստան-Մոլդովա՝ 0:0

Հոկտեմբերի 14-ը ՀՀ ֆուտբոլի հավաքականի տարեգրության սկիզբը դարձավ: Մեր թիմը ստուգողական խաղում «Հազդան» մազադաշտում հյուրընկալեց Մոլդովայի հավաքականին: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 0:0:

Հայաստանի հավաքականում լավագույն խաղացող ճանաչվեց Սարգիս Հովսեփյանը:

ՀՀ հավաքականի կազմը. Հարություն Աբրահամյան, Արմեն Շահգելդյան, Վարդան Խաչատրյան, Երվանդ Կրբաշյան (բոլորն էլ «Արարատ»ից), Սերգեյ Կարապետյան («Շիրակ»), Սարգիս Հովսեփյան (ՀՍԸՄ), Արտաշես Ադամյան («Կոտայք»), Արամայիս Տոնոյան («Արարատ»), Արսեն Ավետիսյան (ՀՍԸՄ), Սամվել Կոստանդյան («Բանանց»), Մկրտիչ Հովհաննիսյան («Կանազ»): ■

Բանիմը վարում է Սուրեն ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱՄՆ-ի նախագահի բանագնացը հանդիպեց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ

Երեկ ԱՄՆ-ի նախագահի հատուկ բանագնաց Ջեկ Մարեսկան Երեւանում հանդիպեց ԼՂ-ի ներկայացուցիչների հետ: Ինչպես «Սնարֆ»-ի թղթակցին հայտնեց Հայաստանում ԼՂՀ-ի ներկայացուցիչ Մանվել Սարգսյանը, այդ հանդիպման նպատակը *«Ղարաբաղյան առճակատման խաղաղ կարգավորման ԵԱՀԽ-ի առաքելության վերակենդանացման հնարավորության կետեր գտնելն էր»:* Սարգսյանի խոսքերով, Մարեսկան, որը միաժամանակ ԵԱՀԽ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչն է, այն կարծիքին է, թե ներկա իրադրությունում Մինսկի խմբի աշխատանքները վերսկսելու նոր հնարավորություններ են ի հայտ եկել: Միաժամանակ, հանդիպման մասնակիցները համաձայնեցին, որ ԵԱՀԽ շրջանակներում բանակցությունների շարունակումը հնարավոր է միայն առանց նախնական պայմանի կրակի անհապաղ դադարեցման դեպքում: ■

Ջ. Մեյջըր. Ղարաբաղը Ադրբեջանի բաղկացուցիչ մասն է

Անգլիայի վարչապետ Ջոն Մեյջորը Ադրբեջանի նախագահին հղած նամակում նշել է, թե Ղարաբաղն Ադրբեջանի բաղկացուցիչ մասն է, եւ այդ հարցով բանակցություններն անիմաստ են: Ըստ Բաքվի ռադիոյի, Մեյջորն իր նամակում շեշտել է, թե Ղարաբաղի ճգնաժամն արգելակում է Հայաստանում եւ Ադրբեջանում ժողովրդավարության իրականացումը:

Մեյջորը նաեւ պաշտպանել է ԵԱՀԽ-ի ձեռնարկումները Ղարաբաղի հիմնահարցի լուծման ուղղությամբ: Ջոն Մեյջորն ավելացրել է, թե խոշոր կապիտալ ներդրումները նավթի արդյունահանման եւ վերամշակման բնագավառում Ադրբեջանի նավթային տարածքներում, British Petroleum-ի եւ Ադրբեջանի միջեւ պայմանագիրը համարում է իր համար ամենաուրախալի լուրը: ■

Խոզի լյարդը կնոջ մարմնում

Լոս Անջելեսի հիվանդանոցներից մեկում կիրակի օրը ժամանակավորապես խոզի լյարդ է պատվաստվել շոկային վիճակում գտնվող մի երիտասարդ կնոջ, մինչեւ մարդկային հարմար օրգանի գտնվելը: Խոզի լյարդի պատվաստումը հաջող կատարելուց հետո «Միղրդ-Սինայի» բժշկական կենտրոնի բժիշկներին հաջողվել է համապատասխան մարդկային լյարդ հայթայթել, որը երեկ փոխարինելու էր կենդանու լյարդին: Սակայն վերջին պահին, նոր վիրահատության ենթարկվելուց առաջ, մանկությունից լյարդի հիվանդությամբ տառապող հիվանդը մահացավ: ■

Ղարաբաղում խաղաղասիրական առաքելությունն ապարդյուն անցավ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղակայված դիտորդների խմբի ղեկավար կապիտան Սերգեյ Կիսելյովի խոսքերով, *«արդեն այսօր կարելի է պնդել, որ այս խաղաղասիրական առաքելությունն էլ Ղարաբաղում անարդյունք անցավ»:*

Ինչպես Ստեփանակերտից հայտնեց «Նոյյան Տապան»-ի թղթակիցը, Ղարաբաղում տեղակայված դիտորդների խմբի ղեկավար կապիտան Կիսելյովի կարծիքով, հրադադարը Լեռնային Ղարաբաղում չի կայացել:

Նրա պնդմամբ, Ստեփանակերտ ժամանելու առաջին իսկ պահից օր չի անցել, որ Ադրբեջանի բանակը զենքի տարբեր տեսակներից չգնդակոծի Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակիչներն ու գյուղերը: Այդ մասին ռուսական դիտորդները պարբերաբար տեղեկացնում են համապատասխան մարմիններին:

Կիսելյովի կարծիքով, արդյունքների բացակայության պատճառները հիմնականում երկուսն են. նախ, դիտորդների տեխնիկական աղքատությունը, որը դիտորդներին հնարավորություն չի տալիս գրանցել ռմբակոծող ինքնաթիռների համարները, կամ «Գրադ» կայանքների եւ հեռահար հրետանու տեղակայությունը: Երկրորդ եւ ամենակարեւոր պատճառն այն է, որ խախտողների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մեխանիզմներ չկան:

«Նոյյան տապան»-ի տեսություն

Հայպետագրոբանկը ընդլայնում է իր կանոնադիր ֆոնդը եւ ս.թ. հոկտեմբերի 10-ից հայտարարում է բաժնետոմսերի լրացուցիչ բաժանորդագրություն

Հայպետագրոբանկը հրավիրում է բոլոր իրավաբանական անձանց եւ անհատ քաղաքացիներին ձեռք բերել իր բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի անվանական արժեքն է 10 հազար ռուբլի եւ 50 հազար ռ.:

Հայպետագրոբանկի 40 բաժանմունքների բազմաբնույթ բանկային աշխատանքներ ունեցող աշխատանքային կոլեկտիվները բաժնետերերին կարող են առակայել բանկային սպասարկում՝ արտոնյալ պայմաններով:

Ձեռք բերելով Հայպետագրոբանկի բաժնետոմսերը՝ դուք կդառնաք ձեր դրամական միջոցները արժեզրկումից, դրանք ներդնելով հուսալի եւ բարձր շահութաբեր Հայպետագրոբանկի կանոնադիր ֆոնդում:

Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերով կարող եք զանգահարել Հայպետագրոբանկ՝ 56.16.56, 56.15.01, հասցեն՝ Երեւան-10, Նալբանդյան 6, Շենգավիթի ագրոբանկ՝ 44.86.74, 44.50.68, Էրեբունու ագրոբանկ՝ 47.02.22, 47.04.02 համարներով, իսկ հանրապետության մյուս վայրերում՝ ագրոբանկի շրջանային բաժանմունք:

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեղորում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ մթնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

Ա. Բլանկ. Չի բացառվում Աբխազիա խաղաղապահ ուժեր մտցնելը

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Անտուան Բլանկը հոկտեմբերի 14-ին Սուխումում չբացառեց, որ իր գլխավորը լսելուց հետո ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միջազգային խաղաղապահ ուժեր կուղարկի Աբխազիա: Լրագրողներին տված հարցազրույցում Ա. Բլանկը հայտարարեց, թե վրաց-աբխազական հակամարտության գոտում ՄԱԿ-ի առաքելության հիմնական նպատակը Աբխազիայի իրավիճակի կարգավորման փաստաթղթերի կատարմանը հետեւելն է, որոնք ստորագրվել են սեպտեմբերի 3-ին Մոսկվայում: Դրա համար, նրա խոսքերով, աբխազները պետք է իրենց ուժերը հետ քաշեն հոկտեմբերի 1-ին իրենց գրաված դիրքերը, այսինքն՝ թողնեն Գագրան, Լեսելիձեն եւ Գանթիադին:

Ա. Բլանկը ցանկություն հայտնեց Գուդաուտայում հանդիպել Աբխազիայի խորհրդարանի նախագահ Վ. Արձինբայի հետ: Նա հայտնեց, թե Սուխումում պետք է աշխատեն ՄԱԿ-ի երկու ռազմական տեսուչներ: Նախորդ օրը Ա. Բլանկը Թբիլիսիում հանդիպեց Վրաստանի ղեկավարության հետ: Ինչպես հայտարարեց Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն Պետխորհրդի նիստում, ՄԱԿ-ի առաքելական խումբը ցանկություն է հայտնել մասնակցել ռուս-վրացական բարձր մակարդակով հանդիպմանը: ■

Հայտարարություն

Երեւանի թիվ 8 բուժմիավորման նեւրոհոգեբույժ-փսիխոթերապեւտ Վարդգես Դավթյանն աշխատում է բժշկի ազատ ընտրության սկզբունքով:

Դիմել կարող են այն հիվանդները, ովքեր ունեն.

- **վախ, տագնապ, անքնություն**
- **հուսահատություն, թախիծ, ընկճվածություն (դեպրեսիա)**
- **կոչյուն մտքեր եւ շարժումներ**
- **ծխելու մոլուցք եւ դրանից ազատվելու բուռն ցանկություն**
- **սեռական թուլություն եւ սառնություն**
- **նեւրոզ եւ նեւրոզանման գանգատներ:**

Դիմել աշխատանքային օրերին, ժ. 9-ից 12-ը:
Հեռ. 23-11-25, 28-31-90:

«Արամ Խաչատրյան» Մեծ Համերգասրահ

68-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ
4485–4486 Հայոց Թվական

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Համերգաշրջանի հովանավորն է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը

16 հոկտեմբեր
ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Թանոս Միմրուցիկուս.
«Տարվա դժոխային եղանակները»
Ջորջ Գերշվին.
Կոնցերտ ջութակի եւ նվագախմբի համար, ֆա մաժոր
(Արմեն Բաբախանյան)
Իգոր Ստրավինսկի.
«Պետրուշկա»

Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան

Սկիզբը՝ ժամը 19.30-ին:
Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

Լուրերի Հոսք

Շեւարդնաձե. ձայների 95,9%

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական նախնական արդյունքներով, ընտրողների 95,9 տոկոսը (2 միլիոն 498 հազար 856 մարդ) իրենց ձայները տվել են էդուարդ Շեւարդնաձեի օգտին: Հանձնաժողովի տվյալներով, այդ օրն ընտրական տեղամասեր են ներկայացել 2 604 165 մարդ՝ գրանցված բոլոր ընտրողների 74,4 տոկոսը: Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին, վրացական խորհրդարանի նոր կազմի առաջին նիստը կկայանա նոյեմբերի 2-ին Թբիլիսիում: Նիստում, ինչպես սպասվում է, վերջնականապես կհաստատվեն ընտրության արդյունքները, եւ Շեւարդնաձեն կստանձնի Վրաստանի գերագույն օրենսդիր մարմնի նախագահի պաշտոնը: ■

Օսիան ձգտում է Ռուսիա

Հարավային Օսիայի բնակչության մեծամասնությունը կողմ է հանրապետության ղեկավարության բռնած անկախության եւ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու կուրսին: Այդ մասին «ԻՖ»-ին տված հարցազրույցում հայտարարեց հարավ-օսական խորհրդարանի նախագահ Թորեզ Կուլումբեգովը: Նրա խոսքերով, այդ դիրքորոշումը չի փոխվել նույնիսկ Ռուսաստանի դիրքորոշումից հետո, որի համաձայն Հարավային Օսիան պետք է մնա Վրաստանի կազմի մեջ: ■

Ռեկետ Արեւմուտքում

«Յուրոպիեն» թերթի հաղորդագրության համաձայն, արեւելաեվրոպական հանցագործները արդեն սկսել են տեղում ահաբեկել արեւմտյան մեծահարուստներին: Խոշոր գումար կորզելու նպատակով առեւանգում է տեղի ունեցել Դանիայում. լատվիացի եւ ռուս ռեկետիրները իրենց գործողությունները պատճառաբանել են նրանով, թե իբր դանիացի կոմերսանտը լատվիական մի ֆիրմայից պարտք է վերցրել եւ անհետացել: ■

Մահ Մարիանայի պատճառով

Վիլնյուսի մարզի պաշտպանության նախարարության վաշտերից մեկի շարային Ս. Բաչկովը, դիտելով «Հարուստներն էլ են լաց լինում» բազմասերիանոց կինոնկարի հերթական սերիան եւ չափից դուրս տարվելով «հարուստների լացով», չհասկացավ թե չլսեց պահակակետ գնալու հրամանը: Հրամանատարը, առանց երկար-բարակ բացատրելու, սեղմեց ատրճանակի ձգանը: Շարային Բաչկովը մահացավ, հայտնում է հանրապետական մամուլը: ■

Լուրերը Interfax-ի «Սնարֆ»-ի, «Նոյյան տապանի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրեն

Apple® Macintosh® համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

REGION RHÔNE-ALPES

Ֆրանսերենը 100 ժամում

Ֆրանսիական կազմակերպությունն առաջարկում է ֆրանսերենի ինտենսիվ դասընթացներ:
Ձեր հարցերին կպատասխանենք ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11:00-17:30: Դասերն սկսվում են հոկտեմբերի 19-ին:
Հեռ. 56-64-84:

FRANCE - FORMATION

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 | Editor H. AVEDIKIAN | ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 | Գրանցման թիւ 65 | Տպաքանակ 20 000 | Ստորագրուած է տպագրութեան | Դասիչ 69149 | Պատուէր 1563 | 14.10.1992

digitised by A.R.A.R.@